Մարդկանց ձայնը. հակամարտության հետևանքով տուժած հասարակությունների կարիքների հացեագրումը Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերում.

«Խաղաղության երկխոսություն» հկ-ի շրջանակային ուսումնասիրությունը

Վանաձոր, Հայաստան 2023 – 2024թթ.

Բովանդակություն

Հապավումներ *2*

Գործադիր ամփոփագիր *3*

Ներածություն. նախադրյալներ և համատեքստ *5*

Ուսումնասիրության նպատակները *10*

Մեթոդաբանությունը և տեսական շրջանակը *11*

Նմուշառման մեթոդաբանությունը 11

Տվյալների հավաքագրման տեխնիկան 11

Վերլուծության մեթոդը 12

Տեսական շրջանակը 12

Ուսումնասիրության սահմանափակումները 12

Խաղաղության սպառնալիքները. ընկալումները և գնահատականները *14*

Շրջանակային ուսումնասիրության ժողովրդագրությունը 14

Հարցվողների հիմնական մտահոգությունները 17

Հիմնական արդյունքները. կապեր և օրինաչափություններ *20*

Անվտանգության սպառնալիքների վերլուծություն՝ ըստ տարածաշրջանային, սեռային, տարիքային և զբաղվածության խմբերի 21

Բարեկեցության սպառնալիքների վերլուծություն՝ ըստ տարածաշրջանային, սեռային, տարիքային և զբաղվածության խմբերի 25

Ազատության սպառնալիքների վերլուծություն՝ ըստ տարածաշրջանային, սեռային, տարիքային և զբաղվածության խմբերի 30

Ինքնության սպառնալիքների վերլուծություն՝ ըստ տարածաշրջանային, սեռային, տարիքային և զբաղվածության խմբերի 34

Այլ կապեր 37

Ուսումնասիրության արդյունքների ընդգրկումը հայ-ադրբեջանական խաղաղության համաձայնագրում. պայմանագրի մշակման հիմունքները. *39*

Հատուկ դրույթներ անվտանգության կատեգորիայի համար 40

Հատուկ դրույթներ բարեկեցության կատեգորիայի համար 40

Հատուկ դրույթներ ազատության կատեգորիայի համար 41

Հատուկ դրույթներ ինքնության կատեգորիայի համար 41

Այլ դրույթներ 41

Եզրակացություն և առաջարկություններ. հետագա ուսումնասիրություն և նկատառումներ *43*

Հակամարտության կարգավորումը և դիվանագիտությունը 44

Ներքին նախաձեռնություններ 45

Միջսահմանային նախաձեռնություններ 45

Ուսումնասիրության հետագա ուղղություններ 46

Հղումներ *47*

Հապավումներ

ԱՊՀ	Անկախ պետություններ համագործակցություն
CMI	Մարտի Ահտիսաարիի խաղաղության հիմնադրամ
ՀՌ	Հաշտեցման ռեսուրսներ
ԵՄ	Եվրոպական միություն
CSDP	ԵՄ Անվտանգության և պաշտպանության ընդհանուր քաղաքականություն
ՀԵՄԱ	Հայաստանում ԵՄ Առաքելություն
ԱԴԾ	Անվտանգության դաշնային ծառայություն
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Գործադիր ամփոփագիր

Հարավային Կովկասի բարդ աշխարհաքաղաքական լանդշաֆտում Հայաստանի և Ադրբեջանի միջև երկարատև հակամարտությունը Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ նշանավորվել է զգալի ցնցումներով և մարդկային կորուստներով: «Խաղաղության երկխոսություն» հկ-ի կողմից Եվրամիության աջակցությամբ իրականացվող այս ուսումնասիրությունը որոշիչ քայլ է՝ ուղղված հայ հասարակության վրա թողած այս հակամարտության բազմակողմանի ազդեցության ընկալումների բացահայտմանը, որը այդուհանդերձ չի ներառում Լեռնային Ղարաբաղից տեղահանվածների տեսակետները:

Ուսումնասիրության մեթոդաբանությունը, որը հիմնված է Յոհան Գալթունգի «Մարդկային հիմնական կարիքների տիպաբանության», ինչպես նաև «Դիրքորոշումների, շահերի և կարիքների» շրջանակի վրա, ներառում է 330 հարցազրույցի անցկացում ողջ Հայաստանի տարածքում: Այս մոտեցումը հնարավորություն է ընձեռել խորությամբ ուսումնասիրել հասարակության կարիքները և վախերը՝ ըստ չորս կատեգորիաների՝ անվտանգություն, բարեկեցություն, ազատություն և ինքնություն: Հավաքագրված արդյունքները վերլուծվել են «Ինքլուզ» թվային գործիքի միջոցով, որը մշակվել է «CMI - Մարտի Ահտիսաարիի խաղաղության հիմնադրամի» նախկին աշխատակիցների կողմից:

Ուսումնասիրության հիմնական արդյունքները բացահայտում են անվտանգության սպառնալիքների, հատկապես՝ ֆիզիկական անվտանգության և տնտեսական կայունության շուրջ գերակշռող մտահոգությունները: Ուշագրավ են նաև բարեկեցության, այդ թվում՝ կրթության և ֆինանսական բարեկեցության խնդիրները: Բացի այդ, ուսումնասիրությունն ընդգծում է ազատության և ինքնության հետ կապված խորը մտահոգությունները՝ հատկապես՝ շեշտադրելով ժողովրդավարական արժեքներն ու մշակութային պահպանությունը:

Այս բացահայտումների դիտարկումը հայ-ադրբեջանական խաղաղության պայմանագրի մշակման գործում էական են, քանի որ ուսումնասիրությունը մեծապես ջատագովում է վերոհիշյալ չորս հիմնական ոլորտները հասցեագրող համապարփակ պայմանագրի մշակման կարևորությունը: Այն առաջարկում է գործնական քայլեր, ինչպիսիք են մշտական հրադադարի հաստատումը, ապառազմականացված գոտիների ստեղծումը, միջսահմանային տնտեսական նախաձեռնությունների խթանումը և հիմնական ծառայությունների հասանելիության ապահովումը: Այս ուսումնասիրությունը նաև առաջարկում է գործնական քայլեր, որոնք կնպաստեն խոսքի ազատության ու քաղաքացիական ազատությունների պաշտպանությանը և մշակութային բազմազանությանն ու ժառանգության պահպանմանը:

Ուսումնասիրության եզրակացության մեջ ներկայացված են առաջարկություններ, որոնք ընդգծում են այնպիսի պայմանագիր մշակելու անհրաժեշտությունը, որը ոչ միայն քաղաքականապես ողջամիտ է, այլև անդրադարձ է կատարում բնակչության կարիքներին: Առաջարկությունները ներառում են համատեղ խաղաղապահ հանձնաժողովի ստեղծում, ներդրումներ սահմանների անվտանգության մեջ, հակամարտությունների նկատմամբ զգայուն տնտեսական ծրագրերի իրականացում և մշակութային փոխանակման ու պահպանման խթանում: Ուսումնասիրությունն ընդգծում է խաղաղության գործընթացին տեղական ձայների ինտեգրման կարևորությունը և շեշտադրում է ճկուն դիվանագիտության, միջազգային միջնորդության, ինչպես նաև կրթության և ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ տեղական նախաձեռնությունների մշակման անհրաժեշտությունը:

Ընդհանուր առմամբ, այս ուսումնասիրությունը կազմակերպության փոքրիկ ներդրումն է տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերում՝ առաջարկելով հակամարտության սոցիալական ազդեցության վերաբերյալ մանրակրկիտ պատկերացում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս չափազանց նեղ և վերից վար «նորմալիզացման» գործընթացի ռիսկերը, որը չի հասցեագրում այստեղ ներկայացվող տարածված մտահոգությունները և մատնանշում է «հպանցիկ» խաղաղության պայմանագրին և գործընթացի կայունությանն առնչվող խնդիրները: Այն ընդգծում է թերի, գերպարզեցված խաղաղության համաձայնագրի պատճառով բռնության վերաճման վտանգը: Այս մտահոգությունը հատկապես տեղին է՝ հաշվի առնելով Հայաստան-Ադրբեջան բանակցությունների ներկայիս հետագիծը՝ դրսևորվելով 2020 թվականի նոյեմբերի 10-ի զինադադարի հայտարարության թերացումներով: Ուսումնասիրությունը ջատագովում է համապարփակ խաղաղության ռազմավարությունը, որն ավելին է քան սոսկ պայմանագրի վրա ստորագրություններ ձեռք բերելը: Այն ընդգծում է խորապես մտածված սոցիալ-քաղաքական շրջանակի մշակման անհրաժեշտությունը, որը ոչ միայն կպահպանի համաձայնագիրը, այլև կխթանի դրա զարգացմանը՝ երկարաժամկետ հեռանկարում ապահովելով դրա արդյունավետությունն ու երկարակեցությունը:

Ներածություն. նախադրյալներ և համատեքստ

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը. Հայ-ադրբեջանական հարաբերությունների բարդ համապատկերը

Լեռնային Ղարաբաղը, որը տարածք է Հարավային Կովկասում, եղել է Հայաստանի և Ադրբեջանի միջև երկարատև հակամարտության էպիկենտրոնը: Պատմական և մշակութային բարդությունների վրա արմատացած այս վեճը նախորդել է Խորհրդային Միության փլուզմանը, և դրա լարվածությունը հասունացել է տասնամյակներ շարունակ: Ղարաբաղյան առաջին պատերազմը (1988-1994 թթ.), որը սկսվել է Խորհրդային Միության փլուզման հետևանքով, էլ ավելի սաստկացրեց այդ էթնիկ և տարածքային վեճերը: 1992-1994 թվականներին տեղի ունեցավ ուժգին էսկալացիա, երբ հայկական ուժերը վերահսկողություն հաստատեցին Լեռնային Ղարաբաղի և հարակից ադրբեջանական տարածքների վրա: Պատերազմի հետևանքով զոհվեց մոտ 30,000 մարդ, իսկ ավելի քան մեկ միլիոն մարդ տեղահանվեց, այդ թվում՝ ադրբեջանցիներ Լեռնային Ղարաբաղից և Հայաստանից, ինչպես նաև հայեր Ադրբեջանից:

Ղարաբաղյան երկրորդ պատերազմը և դրա հետևանքները

2020 թվականին Ղարաբաղյան երկրորդ պատերազմը, նաև հայտնի՝ որպես 44-օրյա պատերազմ, այս տևական հակամարտության համար առանցքային շրջափուլ հանդիսացավ: Ադրբեջանի ռազմական ուժերը, կիրառելով պատերազմական առաջադեմ տեխնոլոգիաներ, վերափոխեցին վիճելի տարածքի վերահսկողության դինամիկան: Պատերազմը հանգեցրեց ավելի քան 6500 մարդկային զոհերի՝ ընդգծելով հակամարտության դաժանությունը: Հակամարտության պատմության ուղենշային իրադարձությունը 2020 թվականի նոյեմբերի 10-ին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի միջնորդությամբ հրադադարի վերաբերյալ եռակողմ հայտարարության ստորագրումն էր: «Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում հրադադարի և բոլոր ռազմական գործողությունների դադարեցման մասին» գլխագրով այս հայտարարության համաձայն՝ Ռուսաստանը 1960 հոգուց բաղկացած խաղաղապահների խումբ տեղակայեց Լեռնային Ղարաբաղում և Հայաստանի հետ կապող կարևոր օղակ հանդիսացող Լաչինի միջանցքի երկայնքով՝ դրանով իսկ ամրապնդելով Ռուսաստանի ազդեցիկ դերը հակամարտության կարգավորման գործընթացում:

Էսկալացիաները և հումանիտար ճգնաժամը

2022 թվականի սեպտեմբերի 13-ին տեղի ունեցավ ուժգին էսկալացիա, երբ Ադրբեջանը լայնամասշտաբ հարձակում սկսեց հայկական տարածքների վրա՝ թիրախավորելով 23 տեղանքներ ՀՀ հարավային մարզերում՝ Սյունիքում, Գեղարքունիքում և Վայոց Ձորում[i]: Այս հարձակումը վնաս հասցրեց Գորիս և Կապան քաղաքների ռազմական և քաղաքացիական տարածքներին, ինչպես նաև Սոթք, Արտանիշ, Ջերմուկ և Կութ գյուղերին: Այս ռազմական գործողությունները[ii], որոնք ամենադաժանն են 2020 թվականից ի վեր, ժամանակավորապես դադարեցվեցին սեպտեմբերի 14-ին՝ հրադադարից հետո: Այնուամենայնիվ, խաղաղությունը փխրուն էր, և մինչև ամսվա վերջ հաղորդվում էր հետագա բախումների մասին:

2022 թվականի դեկտեմբերին հակամարտությունն այլ ընթացք ստացավ, երբ ադրբեջանցի խաղաղ բնակիչները[iii], ներկայանալով իբրև բնապահպանական ակտիվիստներ, շրջափակումներ ստեղծեցին Լաչինի միջանցքի երկայնքով: Այս գործողությունը զգալիորեն սրեց հումանիտար իրավիճակը՝ սահմանափակելով մարդկանց և պարենի համար կենսական նշանակություն ունեցող մուտքը:

Ճգնաժամը խորացավ 2023 թվականի ապրիլին՝ Լեռնային Ղարաբաղի ամբողջական շրջափակմամբ, երբ Ադրբեջանն այս գլխավոր ճանապարհին անցակետ տեղադրեց: Շրջափակումը հանգեցրեց միջազգային մտահոգության: 2023 թվականի սեպտեմբերին մեկնարկեց նոր փուլ, երբ Ադրբեջանը «հակաահաբեկչական գործողություններ» սկսեց Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում՝ վկայակոչելով սահմանադրական կարգի վերականգնումը և պնդելով այնտեղ հայկական ռազմական ուժերի առկայությունը: Այս քայլի հետևանքով տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղից էթնիկ հայերի զանգվածային արտագաղթ: Ավելի քան 100,000 բնակիչ հարկադրված տեղափոխվեց Հայաստան՝ չցանկանալով ապրել Ադրբեջանի վերահսկողության ներքո, ինչպես հայտնում են Ստեփանակերտի հեռացող իշխանությունները: Հետևապես, Լեռնային Ղարաբաղի անջատողական կառավարությունը հայտարարեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության լուծարման մասին:

Բարդացնելով առանց այն էլ լարված իրավիճակը, հաղորդվեց, որ Ադրբեջանի իշխանությունները ձերբակալել են Լեռնային Ղարաբաղի երեք նախկին նախագահներին և տեղական օրենսդիր մարմնի խոսնակին: Այս կալանավորումները 44-օրյա պատերազմի և դրան հաջորդած ռազմական գործողությունների մասնակիցների տևական բանտարկությունների հետ մեկտեղ, շարունակել են լարված պահել Հայաստանի և Ադրբեջանի հարաբերությունները: Այս ամենն ընդգծում է հակամարտության բարդ բնույթը և երկու ժողովուրդների միջև երկարատև վեճի լուծմանը հասնելու ճանապարհին գոյություն ունեցող դժվարին մարտահրավերները:

Փոփոխվող դինամիկան և դաշինքային անցումները

2020 թվականից ի վեր Հայաստանը զգալիորեն փոխել է իր արտաքին քաղաքականությունը՝ այն ավելի համապատասխանեցնելով արևմտյան դաշինքներին: Ռուսական ավանդական կախվածությունը նվազեցնող այս ռազմավարական քայլը կրել է ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանային իրադարձությունների, ինչպես օրինակ՝ Ուկրաինայում Ռուսաստանի ներկայության և Մերձավոր Արևելքում շարունակվող լարվածության ազդեցությունը: Իր սպառազինությունը արդիականացնելու և անվտանգության շրջանակը ընդլայնելու նպատակով Հայաստանն ակտիվորեն ձգտում է համագործակցել Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունից (ՀԱՊԿ) դուրս գտնվող երկրների հետ: Այս փոփոխությունը ներառում է Հնդկաստանից և Ֆրանսիայից պաշտպանական զինատեսակների ձեռքբերման, ինչպես նաև Հունաստանի և Կիպրոսի հետ անվտանգության ոլորտում համագործակցությանն ուղղված ջանքերը: Բացի այդ, այնպիսի երկրներ, ինչպիսիք են Նիդեռլանդները, Իտալիան և Շվեդիան, հետաքրքրություն են ցուցաբերել Հայաստանի հետ հաստատելու պաշտպանական համագործակցություն: Իր միջազգային աջակցության ցանցն ընդլայնելու ձգտմամբ՝ Հայաստանը բանակցություններ է վարում Եվրամիության հետ՝ Եվրոպական խաղաղության գործիքի միջոցով օգնություն ստանալու համար: Միաժամանակ ԱՄՆ-ի հետ ընթանում են քննարկումներ՝ ուղղված անվտանգության միջավայրի գնահատմանը, պաշտպանական բարեփոխումների առաջխաղացմանը և պաշտպանական համագործակցության ամրապնդմանը: Նմանօրինակ երկխոսությունները նույնպես առաջընթաց են գրանցում Ֆրանսիայի հետ, ինչն ընդգծում է Հայաստանի ստանձնած պարտավորությունները՝ ուղղված իր անվտանգության դաշինքները և հնարավորությունները դիվերսիֆիկացնելուն:

Հընթացս այս ամենի, Ադրբեջանը ջանքեր է գործադրում Մոսկվայի հետ հավասարակշռված հարաբերություններ ունենալու ուղղությամբ: Թեև Ադրբեջանը հայտարարել է, որ Ռուսաստանի տեղակայումը Ղարաբաղում թույլատրվում է միայն մինչև 2025 թվականը, այդ տարածքից էթնիկ հայերի հեռանալուց հետո չկա ակնհայտ շտապողականություն ռուսական ուժերի դուրսբերումն արագացնելու համար: Ներկայումս և՛ Ռուսաստանը, և՛ Ադրբեջանը ճնշում են Հայաստանին

միջանցք տրամադրելու Նախիջևանի ադրբեջանական էքսկլավից դեպի հիմնական երկիր, որը կվերահսկվի Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության (ԱԴԾ) կողմից:

Հայաստանի անվտանգության վերափոխվող առաջնահերթությունների էական ցուցանիշ է Եվրամիության Ընդհանուր անվտանգության և պաշտպանական քաղաքականության քաղաքացիական առաքելության (ՀԵՄԱ) տեղակայումը տարածաշրջանում: Այս առաքելությունն ամենօրյա պարեկային ծառայություն է իրականացնում հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով՝ ապահովելով միջազգային ներգրավվածության և աջակցության նոր մակարդակ: 2023 թվականին առաքելությունը համալրեց իր տեղակայված անձնակազմը: Ե՛վ Ռուսաստանը, և՛ Ադրբեջանը դժգոհություն հայտնեցին Հայաստանում ՀԵՄԱ-ի տեղակայման կապակցությամբ: Այնուամենայնիվ, Ադրբեջանը նման առաջարկ ստացավ ԵՄ-ից՝ առաքելությունն իր կողմից տեղակայելու համար, հատկապես, քանի որ առաքելության երկարաժամկետ նպատակը Հայաստանի և Ադրբեջանի հակամարտության հետևանքով բաժանված բնակչությունների միջև վստահության ամրապնդումն է:

Խաղաղության խաթարված բանակցությունները

Լեռնային Ղարաբաղի շուրջ խաղաղ բանակցությունները, որոնք պատմականորեն վերահսկվում են ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից, զգալի մարտահրավերների են առերեսվել հատկապես 44-օրյա պատերազմի ընթացքում: Խումբը դժվարին պայքար է մղել հակամարտության սրացումը արդյունավետորեն կանխելու համար: Ռուսաստանն առանցքային դեր է խաղացել այդ գործընթացներում՝ հաճախ Մինսկի խմբից տարբերվող մոտեցումներ ցուցաբերելով: Արդյունքում ի հայտ են եկել երկու հիմնական բանակցային ուղիներ՝ մեկը՝ ուղղորդված Ռուսաստանի կողմից, իսկ մյուսը՝ առաջնորդված Եվրամիության կողմից՝ ԱՄՆ-ի աջակցությամբ: Սակայն վերջին շրջանում այս բանակցությունները մեծ առաջընթաց չեն գրանցել, հատկապես՝ Ադրբեջանի ռազմական ձեռքբերումներից հետո: Այս առանցքային փոփոխությունը պահանջեց վերագնահատել Լեռնային Ղարաբաղի հակամարտության ավանդական միջնորդական մեխանիզմներն ու մոտեցումները՝ ավելի բարդացնելով կայուն խաղաղության համաձայնագրի հաստատումը:

Հայաստանին և Ադրբեջանին բանակցային սեղանի շուրջ բերելը բարդ է: Հայաստանը կարծես թե գերադասում է արևմտյան երկրների միջնորդությունը, մինչդեռ Ադրբեջանն ավելի հակված է աշխատելու տարածաշրջանային տերությունների հետ՝ ի դեմս Ռուսաստանի և Թուրքիայի: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի և Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի միջև 2023 թվականի հոկտեմբերին նախատեսված կարևորագույն հանդիպումը չեղարկվեց, քանի որ նախագահ Ալիևը խնդիրներ ուներ Ֆրանսիայի դերի և Թուրքիայի՝ բանակցություններից դուրս մնալու հետ: Չնայած այս ամենին՝ վարչապետ Փաշինյանը հանդիպեց եվրոպական առաջնորդների հետ, ինչը հանգեցրեց համատեղ հայտարարության, որն ընդգծեց հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը և բռնությունից զերծ մնալու պարտավորությունը:

2023 թվականի դեկտեմբերին հուսադրող առաջխաղացում հանդիսացավ Հայաստանի և Ադրբեջանի համատեղ հայտարարության տարածումն անկախ կերպով, որն առաջին դեպքն էր այս խաղաղության գործընթացում, որ տեղի ունեցավ առանց արտաքին միջնորդի ներգրավման: Հայտարարության մեջ նրանք համոզմունք հայտնեցին, որ տարածաշրջանում կայուն խաղաղության հասնելու բացառիկ հնարավորություն կա: Երկու կողմերն էլ պայմանավորվածություն ձեռք բերեցին աշխատել հարաբերությունների կարգավորման և խաղաղության պայմանագրի հասնելու ուղղությամբ՝ հարգելով միմյանց ինքնիշխանությունն ու տարածքային

ամբողջականությունը: Նրանք հայտարարեցին գերիների փոխանակում. 32 գերեվարված հայ զինվորների փոխանակում 2 ադրբեջանցի զինվորների հետ, ինչն արագ իրականացվեց: Այս քայլը ողջունվեց ԵՄ-ի և ԱՄՆ-ի կողմից, որոնք երկար ժամանակ խրախուսում էին խաղաղության պայմանագիրը, որը կանդրադառնար չլուծված խնդիրներին, ներառյալ՝ սահմանների սահմանազատմանը (դեմարկացիա):

Այնուամենայնիվ, 2023 թվականի ավարտին ԵՄ-ի, ԱՄՆ-ի կամ Ռուսաստանի ղեկավարությամբ պաշտոնական բանակցությունների վերսկսման անհրաժեշտություն կար: Սա ընդգծում է իրավիճակի շարունակական բարդությունը և չդադարեցվող ջանքերը, որոնք անհրաժեշտ են Լեռնային Ղարաբաղի հակամարտության երկարատև կարգավորման համար:

Հայաստան-Ադրբեջան բանակցությունների վիճարկվող շրջանակը

Հայաստանի և Ադրբեջանի միջև երկարաժամկետ խաղաղության համաձայնագրի ապահովումը բարդ է, ինչը մեծապես պայմանավորված է հակամարտության խնդրի, բնույթի և առաջընթացի վերաբերյալ նրանց ունեցած տարբեր պատկերացումներով: Բաքուն պնդում է, որ ղարաբաղյան հակամարտությունն ավարտվել է, և կոչ է անում մնացյալ հարցերը լուծել բանակցությունների միջոցով: Ի հակադրություն, Երևանը մտահոգված է Ադրբեջանի կողմից հնարավոր նոր սրացումներով, հատկապես՝ դեպի Ադրբեջանի Նախիջևան էքսկլավ ցամաքային միջանցքի ստեղծման հետ կապված:

Հայաստանում կառավարության վրա հասարակական ուժեղ ճնշում է գործադրվում բարձրաձայնել Ղարաբաղի հայերի իրավունքների կարևորությունը տարածաշրջանային երկարաժամկետ խաղաղության հաստատման համար: Բացի այդ, հայ հասարակությունն ակնկալում է, որ կառավարությունը նախապայմաններ կդնի խաղաղ բանակցությունների համար, ինչպիսիք են բոլոր գերիների վերադարձը և ադրբեջանական զորքերի դուրսբերումը հայկական տարածքներից: Պաշտոնական Երևանը պնդում է, որ ցանկացած խաղաղ համաձայնագիր պետք է ներառի սահմանների սահմանազատման կոնկրետ մեխանիզմ՝ առաջարկելով օգտագործել ուշ խորհրդային ժամանակաշրջանի ռազմական քարտեզները, որոնք, ըստ տեղեկությունների, հավանություն ունեն Եվրամիության կողմից: Սակայն այս առաջարկը Բաքվի կողմից չի ընդունվում. Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի արտաքին քաղաքականության հարցերով ավագ խորհրդական Հիքմեթ Հաջիևը հայտնել է, որ Ադրբեջանը նախընտրում է սահմանների սահմանազատման հարցերը լուծել խաղաղության պայմանագրի քննարկումներից զատ: Բանակցություններում այս դիրքորոշումը էական վիճելի կետ է հանդիսանում, որն ընդգծում է երկու երկրների առաջնահերթությունների և դիրքորոշման խորապես արմատացած տարբերությունները:

Այս տարաբնույթ տեսակետները և հասարակական ակնկալիքները զգալի անորոշություն են առաջացնում հավանական խաղաղության համաձայնագրի թե՛ բնույթի և թե՛ արդյունավետության հարցում: Մտահոգությունները, թե համաձայնագիրն ինչպիսի ազդեցություն կունենա հակամարտության գոտում գտնվող մարդկանց կյանքերի վրա և արդյոք այն համապատասխան կերպով կբավարարի նրանց բազմազան կարիքներն ու իրավունքները, շարունակում են մնալ արդիական:

Բարդ և հեղհեղուկ լանդշաֆտ

Այս համատեքստում հակամարտությունից տուժած բնակչության կարիքների հասցեագրման հրամայականը դառնում է առավել քան կենսական: Այս իրավիճակը նաև ընդգծում է խաղաղության համապարփակ համաձայնագրի հասնելու հրատապ անհրաժեշտությունը, որը կանդրադառնա անվտանգության, ինքնության, բարեկեցության և ազատության հիմնախնդիրներին, որոնք տարածաշրջանում

երկարատև կայունության և բարգավաճման գրավականն են: Մեծաթիվ, սակայն հաճախ ոչ ամբողջապես հաղորդված քաղաքացիական զոհերի և վիրավորների դեպքերն էլ ավելի են բարդացնում իրավիճակը: Հակամարտության յուրաքանչյուր դրվագ քաղաքացիական անձանց կյանքում լուրջ կորուստներ է բերում, ինչը հանգեցնում է երկարատև հոգեբանական տրավմայի և համատարած հասարակական վշտի: Հակամարտությունը զերծ չէ նաև մարդու իրավունքների բազմաթիվ խախտումներից, այդ թվում՝ վայրագությունների մասին հաղորդումներից, քաղաքացիական բնակավայրերում արգելված զինամթերքի կիրառումից և ռազմագերիների նկատմամբ վատ վերաբերմունքից: Նման խախտումները խորացնում են առկա լարվածությունը և խաթարում հաշտեցման գործընթացը:

Բացի այդ, հակամարտությունը խաղաղ բնակիչների համար հանգեցրել է զգալի տնտեսական դժվարությունների. վնասվել կամ ավերվել են ենթակառուցվածքներ, ինչպիսիք են տները, դպրոցները և հիվանդանոցները: Այս ոչնչացումը խոչընդոտում է հիմնական ծառայությունների հասանելիությանը, խաթարում կրթությունը և կաթվածահար անում տարածաշրջանի տնտեսական կայունությունը: Հոգեբանական ազդեցությունը խաղաղ բնակիչների, այդ թվում՝ հակամարտության միջով անցած երեխաների վրա, էապես խորն է: Բռնության մշտական սպառնալիքը և հարազատների ու տան կորուստը հանգեցնում են համատարած հոգեբանական տրավմայի և հոգեկան առողջության խնդիրների: Այս մարդասիրական խնդիրների լուծումը կենսական նշանակություն ունի ոչ միայն տուժած բնակչության անմիջական բարեկեցության, այլև տարածաշրջանում խաղաղության և կայունության երկարաժամկետ հեռանկարների համար:

Խաղաղության հաստատման ջանքերի տասնամյակների փորձը ցույց է տվել, որ կայուն խաղաղության համաձայնագրերը պետք է հասցեագրեն այս հիմնարար խնդիրները: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ խաղաղության գործընթացները մակերեսային համաձայնագրերի պատճառով վերաճում են բռնության: Անհամապատասխան խաղաղության համաձայնագրերի հետևանքով հակամարտության վերսկսման վտանգի ռիսկը և քաղաքականության մարտահրավերը հանդիսանում են տվյալ ուսումնասիրության կիզակետը: 2020 թվականի նոյեմբերի 10-ի զինադադարի հայտարարությունը ցույց է տալիս անկատար խաղաղության համաձայնագրերի թերությունները, որոնք անտեսում են ավելի խորը հասարակական վերքերը և դժգոհությունները:

Ուսումնասիրության նպատակները

«Խաղաղության երկխոսություն» հկ-ն, Եվրոպական Միության աջակցությամբ, իր ադրբեջանական գործընկերների հետ համատեղ իրականացրել է ընդարձակ կարիքահեն ուսումնասիրություն: «Մարդկանց ձայնը. հակամարտության հետևանքով տուժած հասարակությունների կարիքների հասցեագրումը Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերում» վերնագրված ուսումնասիրությունը նվիրված է հայ-ադրբեջանական հակամարտությունից տուժած տարբեր խմբերի հիմնական կարիքների բացահայտմանը: Այն դուրս է գալիս մակերեսային դիտարկումներից՝ խորապես ուսումնասիրելու հիմքում ընկած կարիքներն ու վախերը, որոնք ձևավորում են հասարակական տեսակետները: Ուսումնասիրության հիմնական նպատակն է հանդիսանում այդ կարիքների հասցեագրմանն ուղղված հիմնական գործողությունների ծրագրերի մշակումը:

Ուսումնասիրությունը կենտրոնանում է խաղաղության վերաբերյալ մարդկանց տեսակետները ձևավորող կոնկրետ սպառնալիքների բացահայտման, ինչպես նաև այդ մտահոգությունների լուծման շուրջ առաջարկությունների մշակման վրա: Ընդունելով, որ հավանական պայմանագիրը կարող է չանդրադառնալ բացահայտված բոլոր ասպեկտներին՝ «Խաղաղության երկխոսությունը» հավատարիմ է մարդակենտրոն, կարիքների վրա հիմնված մոտեցումը խթանելուն՝ ձգտելով Հայաստանի և Ադրբեջանի միջև բարդ հակամարտության երկարաժամկետ քաղաքական լուծմանը:

Այս զեկույցը ներկայացնում է մասնավորապես Հայաստանում անցկացված հարցազրույցների արդյունքները: Այն չի ներառում Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց տեսակետները, քանի որ հարցազրույցների անցկացումը համընկել է 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների հետ, որոնք նշանավորվել են այնտեղի բնակիչների զանգվածային տեղահանմամբ: Հայաստանում ֆոկուս խմբերի քննարկումներն ամփոփող զեկույցը նախատեսվում է հրապարակել 2024 թվականին: Բացի այդ, նախապատրաստվում է Ադրբեջանում անցկացված ուսումնասիրության արդյունքները ներկայացնող առանձին զեկույց, որը կհրապարակվի մոտ ժամանակներում:

Ծրագրի հաջողության ու արդյունավետության հասնելու գործում մեծ ներդրում ունեն Լոնդոնում գործող «Հաշտեցման Ռեսուրսներ» կազմակերպությունը և Հելսինկիում գործող «CMI - Մարտի Ահտիսաարիի խաղաղության հիմնադրամը»՝ հատկապես աջակցելով «Խաղաղության երկխոսությանը» հավաքագրված տվյալների վերլուծության հարցում:

Մեթոդաբանությունը և տեսական շրջանակը

Այս շրջանակային ուսումնասիրության մեթոդաբանությունը ճշգրտորեն է մշակվել՝ նպատակ ունենալով բազմակողմանի պատկերացում կազմել հարցվողների հիմնական կարիքների մասին՝ պարզելով նրանց տեսակետները Հայաստանի և Ադրբեջանի միջև կայուն և արժանապատիվ խաղաղության վերաբերյալ: Հետազոտությունն ամփոփում է 330 հարցազրույց, որոնք իրականացվել են տասը վերապատրաստված հարցազրուցավարների կողմից Հայաստանի բոլոր մարզերում և մայրաքաղաք Երևանում:

Նմուշառման մեթոդաբանությունը

Այս ուսումնասիրությունը նպատակաուղղված էր բացահայտելու տարբեր աշխարհագրական և ժողովրդագրական միջավայրերում բնակչության որոշակի կարիքները՝ մասնավորապես կենտրոնանալով դրանց վրա հետևյալ դիտանկյուններից.

- Հայաստան-Ադրբեջան սահմանին հարող սահմանամերձ շրջանների բնակիչների հատուկ կարիքները՝ համեմատած սահմանից հեռու գտնվող շրջանների բնակիչների կարիքների հետ:
- Գյուղական բնակավայրերում մարդկանց առանձնահատուկ պահանջները՝ համեմատած քաղաքային միջավայրերի բնակիչների պահանջների հետ:
- Սահմանամերձ գյուղական և սահմանամերձ քաղաքային բնակավայրերում առկա կարիքների համեմատական վերլուծություն:

Այս հատուկ կատեգորիաների թիրախավորման նպատակն էր պատկերացում կազմել այն մասին, թե ինչպես է հակամարտության գոտիներից և տարբեր կենսամիջավայրերից որոշակի հեռավորության վրա գտնվելն ազդում տվյալ բնակչության կարիքների և տեսակետների վրա: Բացի այդ, ուսումնասիրությունը նպատակ ուներ բացահայտելու տարբեր ժողովրդագրական խմբերի կարիքների բազմազանությունը, ներառյալ՝ սեռային, զբաղվածության և տարիքային տարբերությունները:

Ուսումնասիրությունն իրականացվել է ձնագնդի մեթոդով, որը ներգրավում է նախնական մասնակիցների, ովքեր իրենց ցանցերից հավաքագրում են այլոց՝ ստեղծելով ուղղորդումների շղթա: Թեև այս տեխնիկան արդյունավետ է որոշակի խմբերին հասնելու համար, սակայն այն չի կարող ապահովել տեսանկյունների բազմազանության շրջանակ, քանի որ այն ստեղծում է նմուշ՝ հիմնված առկա ցանցերի վրա: Այսպիսով, թեև բացահայտումները խորաթափանց են, այնուամենայնիվ անհրաժեշտ է վերջիններս զգուշորեն արտարկել (էքստրապոլացիա), քանի որ դրանք կարող են ամբողջապես չներկայացնել լայն բնակչությանը:

Տվյալների հավաքագրման տեխնիկան

30-40 րոպե տևողությամբ հարցազրույցներն անցկացվել են 21 հարցից բաղկացած ստանդարտացված հարցաշարի միջոցով: Այս կառուցվածքային մոտեցման հիմնավորումը մանրամասն ներկայացված է ստորև բնութագրված տեսական շրջանակի բաժնում:

Վերլուծության մեթոդը

Տվյալները վերլուծվել են «Ինքլուզ»[iv] գործիքի միջոցով, որը մշակվել է խաղաղության բարդ միջնորդության գործընթացներում Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր նախագահ Մարտի Ահտիսաարիի «CMI - Մարտի Ահտիսաարիի խաղաղության հիմնադրամի» նախկին աշխատակիցների կողմից: Այս գործիքը նախատեսված է ընդհանուր շահերը, սպառնալիքները և անորոշությունները բացահայտելու և վերլուծելու համար, ինչը կնպաստի խաղաղության գործընթացի խթանմանը:

Տեսական շրջանակը

Կարիքահեն մոտեցում. Ուսումնասիրությունը հիմնված է Յոհան Գալթունգի «Մարդու հիմնական կարիքների տիպաբանության»[v] վրա, ըստ որի՝ կարիքները դասակարգվում են անվտանգության, բարեկեցության, ազատության և ինքնության կատեգորիաներում: Այս մոտեցումը նպաստեց հասարակական ակնկալիքները և հակամարտության կարգավորման գործընթացներին բնորոշ հակասություններն առավել խորը հասկանալուն՝ շեշտելով կարգավորման ռազմավարությունների և հակամարտության հիմքում ընկած աղբյուրների համադրման անհրաժեշտությունը: Այս կարիքների բացահայտումը էական կարևորություն ուներ դրանց հասցեագրմանն ուղղված գործնական և բազմաշերտ առաջարկություններ մշակելու համար:

Բնակչության կարիքների և վախերի բացահայտում (Դիրքորոշումների, շահերի, կարիքների (ԴՇԿ) շրջանակ). ԴՇԿ-ի շրջանակը[vi] այս հետազոտության մեկ այլ հիմնարար տեսական սկզբունք է, որն օգնում է հասկանալ հակամարտության դինամիկան՝ ուսումնասիրելով ներգրավված կողմերի մոտեցումները: Հիմնական կարիքները կազմում են հասարակական շահերի հիմքը, որն իր հերթին ազդեցություն ունի անհատական դիրքորոշումների վրա: Այս մոտեցմամբ ուսումնասիրությունը նպատակ ուներ խորանալ դիրքորոշումները ձևավորող հույզերի, դրդապատճառների և կարիքների մեջ՝ այդ կերպ ավելի երկարաժամկետ տեսանկյունից միտված լինելով նպաստել հակամարտող կողմերի միջև արդյունավետ հաղորդակցությանը և երկխոսությանը: ԴՇԿ-ի շրջանակը նաև հնարավորություն տվեց բացահայտելու ընդհանուր հիմքերը և փոխզիջման հնարավոր ոլորտները՝ ուշադրությունը արմատացած դիրքորոշումներից փոխադրելով ընդհանուր շահերի և դրանց հիմքում ընկած կարիքների վրա:

Մարդկային անվտանգության հայեցակարգը. Այս հայեցակարգը ձևավորել է ուսումնասիրության երրորդ տեսական հիմքը, որը հնարավորություն է տալիս բացահայտել հիմնարար կարիքները: Որպես տեսական հիմք՝ Մարդկային անվտանգության հայեցակարգը անբաժանելի մաս է հանդիսացել հակամարտությունից տուժած հասարակություններում հիմնարար կարիքների բացահայտման գործում: Վերջիններս դասակարգվել և ստորաբաժանվել են ըստ Մարդկային անվտանգության հայեցակարգի՝ ապահովելով ավելի խորը պատկերացում մասնակիցների դիրքորոշումները ձևավորող հատուկ կարիքների վերաբերյալ: Հարցվողներին խնդրել են 0-10 սանդղակով գնահատել նախանշված 21 սպառնալիքների ազդեցությունը, որոնք դասակարգվել են անվտանգության, բարեկեցության, ազատության և ինքնության չորս հիմնական խմբերում:

Ուսումնասիրության սահմանափակումները

- Ուսումնասիրությունը լիարժեք ներկայացուցչական չէ և արտացոլում է միայն հարցվողների տեսակետները:

- Հարցվողների սուբյեկտիվ պատկերացումները կարող էին ազդեցություն ունենալ իրենց՝ հիմնական եզրույթների վերաբերյալ ունեցած ընկալումների վրա, որոնցից են անվտանգությունը, մարդու իրավունքները, ժողովրդավարությունը կամ ինքնությունը:
- Հարցազրույցներն անցկացվել են Լեռնային Ղարաբաղում սեպտեմբերյան աղետալի իրադարձությունների ժամանակ, որոնք նշանավորվել են այնտեղի բնակիչների մասսայական տեղահանմամբ: Այս իրադարձությունների ֆոնը զգալիորեն ազդեցություն է ունեցել հայաստանյան հարցվողների պատասխանների վրա, ովքեր հաճախ մտահոգություններ էին հայտնում, որոնք ավելի շատ արտացոլում էին Լեռնային Ղարաբաղից տեղահանվածների հավաքական կարիքները: Այս պատասխանների օրինաչափությունն ընդգծում է հարցվողների կարեկցանքը և նույնականացման խորը զգացումը նրանց հետ, ովքեր ստիպված են եղել լքել իրենց հայրենիքը:

Վերոհիշյալ մեթոդաբանության միջոցով ուսումնասիրությունը բացահայտում է խաղաղության և հակամարտության բարդ դինամիկայի վերաբերյալ էական պատկերացումները՝ հաշվի առնելով տարածաշրջանում անհատների բազմազան խմբերի հեռանկարները:

Խաղաղության սպառնալիքները. ընկալումները և գնահատականները

Շրջանակային ուսումնասիրության ժողովրդագրությունը

Ուսումնասիրությունն ամփոփում է 330 հարցազրույց, որոնք իրականացվել են Հայաստանի տասը մարզերում և մայրաքաղաք Երևանում: Մասնավորապես՝ այն ներառում է 25 հարցազրույց սահմանամերձ գյուղական բնակավայրերում, 21 հարցազրույց՝ սահմանամերձ քաղաքային բնակավայրերում, 69 հարցազրույց՝ ոչ սահմանամերձ գյուղական բնակավայրերում և 215 հարցազրույց՝ ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայրերում: Հարցվողների սեռային բաշխվածությունը կազմում է 111 տղամարդ և 219 կին: Մասնագիտական ներկայացուցչության տեսանկյունից հարցվողներից 51-ը եղել են պետական կառույցներից, 55-ը՝ տեղական ինքնակառավարման մարմիններից, 64-ը աշխատել են մասնավոր կամ հանրային հատվածում, 52-ը գործազուրկ են եղել, 50-ը՝ուսանողներ, 53-ը՝ թոշակառուներ, իսկ 5-ը՝ այլ կատեգորիաների: Հետազոտությունը ներառել է բոլոր տարիքային խմբերը. 18-30 տարեկան 86 հարցվող, 30-45 տարեկան 111 հարցվող, 45-60 տարեկան 75 հարցվող և 60 տարեկանից բարձր 58 հարցվող:

Նկ.1. Հարցազրույցների բաշխումը՝ ըստ բնակավայրի



Նկ.2. Սեռային բաշխում



Նկ.3. Զբաղվածության ոլորտի բաշխում



Նկ.4. Տարիքային բաշխում



Հարցվողներին խնդրել են 0-10 սանդղակով գնահատել տարբեր սպառնալիքների ազդեցությունը Ադրբեջանի և Հայաստանի միջև երկարաժամկետ և արժանապատիվ խաղաղության զարգացման վրա: Այս սանդղակում 1 գնահատականը ցույց է տալիս, որ սպառնալիքն ընդհանրապես կարևոր չէ, մինչդեռ 10-ը նշանակում է, որ այն չափազանց կարևոր է: Առանձնացված 21 սպառնալիքները դասակարգվել են անվտանգության, բարեկեցության, ազատության և ինքնության չորս հիմնական խմբերում:

Անվտանգություն

1. Ֆիզիկական գոյության սպառնալիքներ (Բռնության, պատերազմի, ահաբեկչության կամ ագրեսիայի ցանկացած դրսևորում, որոնք ուղղակիորեն վտանգում են անհատների կամ նրանց ունեցվածքի բարեկեցությունը:)
2. Տնտեսական սպառնալիքներ (ֆինանսական անկայունություն, աղքատություն, ինչպես նաև առևտրի խախտումներ, որոնք կարող են բացասաբար ազդել անհատների և հասարակությունների տնտեսական բարեկեցության վրա:)

3. Կիբեր սպառնալիքներ (Չարտոնված մուտքեր, հաքերային հարձակումներ, տվյալների խախտում, ինքնության գողություն և այլ վնասակար գործողություններ, որոնք թիրախավորում են համակարգչային համակարգերին, ցանցերին կամ առցանց հարթակներին՝ վտանգի ենթարկելով թվային անվտանգությունն ու գաղտնիությունը:)
4. Բնապահպանական սպառնալիքներ (Բնական աղետների, կլիմայի փոփոխության, աղտոտման, անտառահատումների և այլ գործոններին առնչվող ռիսկեր, որոնք վտանգ են հանդիսանում էկոհամակարգերի առողջության և բնական ռեսուրսների կայուն օգտագործման համար:)
5. Քաղաքական և սոցիալական սպառնալիքներ (Քաղաքական կայունությանն ուղղված մարտահրավերներ, ինչպիսիք են քաղաքական անկարգությունները, կոռուպցիան, սոցիալական ցնցումները, գաղափարական հակամարտությունները և մարդու իրավունքների խախտումները, որոնք խաթարում են սոցիալական համախմբվածությունը և մարդկանց ու համայնքների բարեկեցությունը:)

<u>Բարեկեցություն</u>

6. Բարեկեցության և ֆինանսական կայունության սպառնալիքներ (Աղքատություն, սոցիալական բացառում, անհավասարություն և կենսամակարդակի անհամաչափություն:)
7. Բավարար կենսամակարդակի սպառնալիքներ (Հիմնական ծառայությունների հասանելիության բացակայություն, ինչպիսիք են բնակարանը, սնունդը, էլեկտրաէներգիան, գազը, ջուրը և կենսապահովման այլ կարիքները:)
8. Կայուն աշխատանքի ապահովման սպառնալիքներ. գործազրկություն (Աշխատանքի սահմանափակ հնարավորություններ կամ կայուն և արժանապատիվ աշխատանք ապահովելու անկարողություն, ինչը հանգեցնում է ֆինանսական սթրեսի, ռեսուրսների հասանելիության նվազմանը և ընդհանուր բարեկեցության մակարդակի իջեցմանը:)
9. Սոցիալական պաշտպանության սպառնալիքներ. (Անբավարար առողջապահական ծառայություններ, սոցիալական աջակցության ծրագրեր և կենսաթոշակային սխեմաներ, որոնք չեն ապահովում անհրաժեշտ աջակցություն անհատներին և համայնքներին:)
10. Կրթության և հմտությունների զարգացման ապահովման սպառնալիքներ (Որակյալ կրթության և հմտությունների ձևավորման սահմանափակ հնարավորություններ, որոնք խոչընդոտում են անձնական աճին և սոցիալ-տնտեսական առաջընթացին:)
11. Առողջապահական սպառնալիքներ (Մաքուր ջրի անբավարար հասանելիություն, անբավարար սանիտարական պայմաններ, վարակիչ հիվանդությունների տարածվածություն կամ թերսնուցում:)

<u>Ազատություն</u>

12. Ժողովրդավարության և ազատության սպառնալիքներ (Կառավարությունների կողմից քաղաքական այլախոհության ճնշումներ, խոսքի ազատության սահմանափակում, լրատվամիջոցների անկախության սահմանափակում և մարդու իրավունքների ոտնահարում:)
13. Արդյունավետ ժողովրդավարական կառավարման սպառնալիքներ. (Անբավարար կամ կոռումպացված ժողովրդավարական ինստիտուտներ, կառավարման մեջ թափանցիկության և հաշվետվողականության բացակայություն և քաղաքական սահմանափակ մասնակցություն, որոնք խաթարում են ժողովրդավարական գործընթացը և սահմանափակում որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների ներգրավվման կարողությունը:)

14. Խոսքի ազատության սպառնալիքներ (Խոսքի ազատության հարկադրված սահմանափակումներ, ներառյալ՝ գրաքննությունը, լրագրողներին ահաբեկելը, առցանց հսկողությունը և լրատվամիջոցների նկատմամբ վերահսկողությունը, անհատների՝ իրենց կարծիքն արտահայտելու, տեղեկատվություն տարածելու և հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորությունների սահմանափակումը:)
15. Մարդու իրավունքների սպառնալիքներ. (Խոշտանգումների, կամայական կալանավորման, խտրականության և հալածանքների դեպքեր, որոնք ոտնահարում են մարդու հիմնարար իրավունքները՝ խախտելով նրանց ազատությունը և խոչընդոտելով նրանց իրականացնել իրենց անձնական նպատակները:)
16. Քաղաքացիական ազատությունների սպառնալիքներ (Քաղաքացիական ազատությունների սահմանափակումներ, ինչպիսիք են հավաքների, միավորումների ազատությունը և բողոքի խաղաղ ցույցերը, որոնք խոչընդոտում են քաղաքացիների՝ իրենց իրավունքներից օգտվելու և իրենց մտահոգությունները բարձրաձայնելու կարողությանը:)
17. Սոցիալական և մշակութային սպառնալիքներ (Այն հասարակական նորմերը, ավանդույթները և մշակութային պրակտիկաները, որոնք խտրականություն են դրսևորում հատուկ խմբերի, ներառյալ՝ կանանց, փոքրամասնությունների կամ մարգինալացված համայնքների նկատմամբ, և ամրապնդում են խտրականությունը, նախապաշարմունքները և սոցիալական բացառումը՝ խաթարելով բոլորի համար հավասար ազատության սկզբունքը:)

<u>Ինքնություն</u>

18. Հավասարության, ներառականությանը և անկողմնակալության սպառնալիքներ. խտրականություն, նախապաշարմունք, սոցիալական բացառում (Ռասայական, էթնիկական, կրոնական, սեռային, սեռական կողմնորոշման կամ ինքնության այլ ասպեկտների վրա հիմնված խտրականություն, ինչպես նաև անհատներին կամ խմբերին սոցիալական, քաղաքական կամ տնտեսական հնարավորություններից զրկում նրանց ինքնության պատճառով:)
19. Մշակութային բազմազանության և ժառանգության պահպանման սպառնալիքներ. մշակութային ձուլում (Գերիշխող մշակութային նորմերին և արժեքներին բռնի համապատասխանեցում սեփական մշակութային ինքնության և մշակութային ժառանգության ոչնչացման հաշվին:)
20. Ինքնության արտահայտման սպառնալիքներ (Անհատներին կամ խմբերին իրենց մշակութային, լեզվական կամ կրոնական ինքնությունն արտահայտելու արգելումը կամ սահմանափակումը, ինչը խաթարում է բազմազանությունը և ոչնչացնում մշակութային ժառանգության հարստությունը:)
21. Կարծրատիպերի ձևավորման ու տարածման սպառնալիքներ (Լրատվամիջոցներում, կրթական ոլորտում կամ հանրային խոսույթներում բացասական կարծրատիպեր, որոնք նպաստում են որոշակի ինքնությունների մասին վնասակար պատմույթների խթանմանը՝ ամրապնդելով խտրականությունը և կողմնակալությունը:)

Հարցվողների հիմնական մտահոգությունները

Հայաստանյան հարցվողների տեսակետները ցույց են տալիս խաղաղության կառուցման համապարփակ ընկալում՝ ներառելով անվտանգությունը, բարեկեցությունը, ազատությունը և ինքնությունը: Յուրաքանչյուր կատեգորիայի համար հաշվարկված միջին գնահատականները հետևյալն են.

- Անվտանգության կատեգորիա. միջին գնահատականը՝ 7.64:
- Բարեկեցության կատեգորիա. միջին գնահատականը՝ 7.12:
- Ազատության կատեգորիա. միջին գնահատականը՝ 6.72:
- Ինքնության կատեգորիա. միջին գնահատականը՝ 6.94:

Նկ.5. Միջին գնահատականները՝ ըստ յուրաքանչյուր կատեգորիայի

Անվտանգություն 10-ից 7.64	Բարեկեցություն 10-ից 7.12
Ազատություն 10-ից 6.72	Ինքնություն 10-ից 6.94

Տվյալները ցույց են տալիս, որ թեև բոլոր կատեգորիաներում կան մտահոգություններ, սակայն հարցվողների ուշադրության կենտրոնում է անմիջական ֆիզիկական անվտանգության, տնտեսական կայունության և կրթության ու մշակույթի պահպանման երկարաժամկետ կարևորությունը: Այս առաջնահերթությունները արտացոլում են խաղաղության կառուցման վերաբերյալ խորքային ընկալումը, որտեղ հետագա կայունության համար անվտանգության ու տնտեսության անմիջական սպառնալիքները նույնքան կարևոր են, որքան մշակութային ինքնությունը և կրթությունը: Ըստ յուրաքանչյուր կատեգորիայի միջին գնահատականների՝ հայաստանյան հարցվողների շրջանում առաջնահերթությունները հետևյալն են.

Անվտանգություն (միջին գնահատականը՝ 7.64). Սա ամենաբարձր առաջնահերթության կատեգորիան է: Այս շրջանակներում առանձնահատուկ մտահոգություններն են.

- *Ֆիզիկական սպառնալիքները (8.67).* Ամենաբարձր գնահատված ենթակատեգորիան է, որը ցույց է տալիս ծայրահեղ մտահոգություն բռնության, պատերազմի և ագրեսիայի վերաբերյալ:
- *Տնտեսական սպառնալիքները (7.97).* Եվս ստացել է բարձր գնահատական՝ ցույց տալով խորը մտահոգություն ֆինանսական անկայունության և հասարակության բարեկեցության վրա դրա ունեցած ազդեցության վերաբերյալ:

Բարեկեցություն (միջին գնահատականը՝ 7.12). Երկրորդ ամենաբարձր առաջնահերթության կատեգորիան: Այս կատեգորիայի հիմնական մտահոգություններն առնչվում են.

- *Կրթության և հմտությունների զարգացման սպառնալիքներին (7.49).* Սա արտացոլում է կրթության գործոնը ապագա կայունության և խաղաղության համար:
- *Բարեկեցության և ֆինանսական կայունության սպառնալիքներին (7.53*). Այստեղ ի հայտ են գալիս սոցիալական բացառման և անհավասարության վերաբերյալ մտահոգությունները:

- *Կայուն զբաղվածության սպառնալիքներին (7.22).* Այստեղ կարևորվում է աշխատանքային անվտանգության գործոնը հասարակական կայունության մեջ:

Ազատություն (միջին գնահատականը՝ 6.72).

- *Ժողովրդավարություն ու ազատություն (7.02) և մարդու իրավունքների խախտման սպառնալիքներ (7.24).* Այս սպառնալիքները ամենաբարձր մտահոգությունն են ստացել ազատության կատեգորիայում՝ ընդգծելով քաղաքական ճնշումների և մարդու իրավունքների հետ կապված մտահոգությունները:

Ինքնության կատեգորիա (միջին գնահատականը. 6.94).

- *Մշակութային բազմազանության և ժառանգության պահպանման սպառնալիքներ (7.48).* Ինքնության ներքո ամենաբարձր գնահատված առաջնահերթության ենթակատեգորիան է, որը ցույց է տալիս մշակութային ինքնության և ժառանգության պահպանման կարևորումը:

Նկ.6. Երեք ամենաբարձր միջին գնահատականները՝ ըստ յուրաքանչյուր կատեգորիայի



Հիմնական արդյունքները. կապեր և օրինաչափություններ

Վերլուծությունը հստակ ընդգծում է, որ հարցվողների առաջնային մտահոգությունները հանդիսանում են անվտանգության սպառնալիքները: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ բարեկեցության, ազատության և ինքնության հետ կապված մտահոգությունները նույնպես էական դեր են խաղում Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հաստատման ջանքերի վրա ներազդելու գործում: Ուսումնասիրությունը բացահայտում է էական տատանումներ, թե ինչպես են սպառնալիքներն ընկալվում՝ ելնելով տարածաշրջանից, սեռից, տարիքից և զբաղվածությունից, ինչն էլ ավելի է ընդգծում այս հակամարտության համատեքստում գոյություն ունեցող տարբեր պատկերացումները:

Թե՛ գյուղական, թե՛ քաղաքային սահմանամերձ բնակավայրերի հարցվողները մշտապես բարձր գնահատականներ են տվել սպառնալիքներին, մասնավորապես՝ առնչվող ֆիզիկական անվտանգությանը, մշակութային ժառանգությանը, կրթությանը, գործազրկությանը և մարդու իրավունքների խախտումներին: Այս հարցվողների ավելի քան 90%-ը անվտանգության սպառնալիքները գնահատել է 9 և ավելի: Բարեկեցությանն առնչվող սպառնալիքները նույնպես զգալի ուշադրության են արժանացել այս խմբի ներսում: Ինքնության սպառնալիքները վերաբերյալ մտահոգությունները ևս ուշագրավ էին, քանի որ դրանց տրված գնահատականները հիմնականում 8 կամ ավելի բարձր էին:

Այնուամենայնիվ, թեև մարդու իրավունքների և ազատության սպառնալիքները համարվում էին կարևոր, դրանք ստացել են փոքր-ինչ ավելի ցածր գնահատականներ՝ հիմնականում 7-ից բարձր: Կարելի է ենթադրել, որ մարդու իրավունքների և ազատությունների սպառնալիքների համեմատաբար ցածր գնահատականները ցույց են տալիս գերակշռող երկատվածություն, որտեղ առաջնահերթությունը հաճախ տրվում է սահմանամերձ տարածքների անվտանգության ապահովմանը, քան ժողովրդավարական սկզբունքներին և մարդու իրավունքներին:

Ոչ սահմանամերձ բնակավայրերում հարցվողները համեմատաբար միջին գնահատականներ են տվել ազատության հետ կապված սպառնալիքներին, ներառյալ՝ մարդու իրավունքների խախտումները, ժողովրդավարությունը, արդյունավետ ժողովրդավարական կառավարումը, քաղաքացիական ազատությունները և սոցիալական ու մշակութային ճնշումները:

Բացի այդ, ի հայտ են եկել սպառնալիքների ընկալման սեռային տարբերություններ: Տղամարդ հարցվողները, ընդհանուր առմամբ, ավելի ցածր գնահատականներ են տվել սպառնալիքներին՝ համեմատած կանանց: Հատկանշական է, որ միակ սպառնալիքը, որն ավելի բարձր գնահատական է ստացել տղամարդկանց կողմից, վերաբերում էր քաղաքացիական ազատություններին:

Ավելին, վերլուծությունը բացահայտում է սպառնալիքների ընկալման զգալի տատանումներ՝ պայմանավորված հարցվողների տարիքով: Ամենաերիտասարդ խումբը (18-30) ավելի մեծ նշանակություն է տվել ազատության հետ կապված սպառնալիքներին, մինչդեռ միջին տարիքի խումբը (45-60) դրանք միջինից մի փոքր բարձր է գնահատել: Փոխարենը նրանք ավելի շատ կենտրոնացել են ֆիզիկական, տնտեսական և սոցիալ-քաղաքական սպառնալիքների վրա: Ավագ սերունդը առաջնահերթություն է տվել բարեկեցությանը, իսկ ամենացածրը գնահատել է կիբերանվտանգության սպառնալիքները: Այդուհանդերձ, բոլոր տարիքային խմբերում կար կոնսենսուս՝ կապված ինքնության սպառնալիքների բարձր

կարևորության հետ, ընդ որում՝ գնահատականների մեծ մասը տատանվում էր 7-8-ի միջև:

Անվտանգության սպառնալիքների վերլուծություն՝ ըստ տարածաշրջանային, սեռային, տարիքային և զբաղվածության խմբերի

Նկ.7. Անվտանգության կատեգորիայի սպառնալիքների միջին գնահատականները



1. **Ֆիզիկական սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 8.67).**

Տատատնումներն՝ ըստ բնակավայրերի. Թե՛ քաղաքային, թե՛ գյուղական շրջանների հարցվողները բարձր մտահոգություն են հայտնել ֆիզիկական սպառնալիքների վերաբերյալ: Մասնավորապես՝ սահմանամերձ շրջաններում բնակվողներն ագրեսիան և բռնությունն ընկալում էին որպես խաղաղության էական խոչընդոտներ:

Բացի այդ, սահմանամերձ բնակավայրերի բնակիչները հաճախ են անդրադառնում երկու առանցքային սուբյեկտների՝ Հայաստանում գործող ՌԴ Անվտանգության դաշնային ծառայության սահմանապահ ծառայության և Լեռնային Ղարաբաղում ռուսական խաղաղապահների տեղակայման անարդյունավետությանը: Նրանք նշում են, որ այս երկու սուբյեկտներն էլ ձախողել են առկա ֆիզիկական անվտանգության խնդիրների լուծման հարցում: Այս մտահոգությունները հաճախ կապված են Լեռնային Ղարաբաղից բնակչության զանգվածային արտագաղթի հետ: Նման հարցերը զգալիորեն ազդում են տարածաշրջանային կայունության և անվտանգության վերաբերյալ հարցվողների պատկերացումների վրա՝ ընդգծելով այդ մարտահրավերների խորը ազդեցությունը տարածքի անվտանգության դինամիկայի վրա:

> *«Ցանկացած ագրեսիա և բռնություն բացառում է խաղաղության հաստատումը»:* (Իգական, պետական հատվածի աշխատող, Գեղարքունիքի մարզի Արտանիշի սահմանամերձ գյուղական բնակավայր, 45-60 տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Թե՛ կին և թե՛ տղամարդ հարցվողներն էլ շեշտել են ֆիզիկական անվտանգությունը, սակայն կանայք ավելի անմիջականորեն են հայտնել իրենց վախերը:

> *«Արցախի կորուստը և մոտ ապագայում ավելի շատ հարձակումների վախը ինձ համար խաղաղության հիմնական սպառնալիք են»:* (Իգական, չի աշխատում, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 30-45 տարիքային խումբ)

Մտահոգությունները՝ ըստ տարիքային խմբերի. Ֆիզիկական սպառնալիքների վերաբերյալ մտահոգությունը մշտապես բարձր է բոլոր տարիքային խմբերում: Ե՛վ 18-30 տարեկան երիտասարդները, և՛ 60 տարեկանից բարձր անձինք էապես կարևորում են այս սպառնալիքները՝ որպես հիմնական մտահոգություն:

> *«Ֆիզիկական սպառնալիքը ներկայումս ամենամեծ սպառնալիքներից մեկն է»:* (Իգական, ուսանող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Ֆիզիկական սպառնալիքները կարևորություն են ստանում տարբեր զբաղվածություններ ունեցող մարդկանց խմբերում: Սա ներառում է գործազուրկներին, մասնավոր/պետական հատվածի աշխատակիցներին և ուսանողներին, ինչը ցույց է տալիս դրանց ակնհայտ ճանաչումը՝ որպես սպառնալիքներ:

2. **Տնտեսական սպառնալիքներ (միջին գնահատական՝ 7.97).**

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Քաղաքային և սահմանամերձ շրջաններում ապրող հարցվողները արտահայտել են տարբեր տեսակետներ: Քաղաքային բնակավայրերում տնտեսական կայունությունը հաճախ դիտարկվել է որպես կարևոր գործոն խաղաղության համար: Ի հակադրություն, սահմանամերձ շրջաններում գտնվող հարցվողները տնտեսական գործոններն ավելի քիչ հավանական են համարել որպես խաղաղության անմիջական խոչընդոտ:

> *«Ուժեղ տնտեսությունը և արդար առևտուրը կարևոր են, բայց դրանք չեն խանգարում խաղաղությանը: Ավելի շատ խաղաղությունը և բաց սահմանները ավելի կզարգացնեն մեր տնտեսությունը»:* (Իգական, պետական հատվածի աշխատող, Գեղարքունիքի մարզի Արտանիշի սահմանամերձ գյուղական բնակավայր, 45-60 տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Ե՛վ տղամարդիկ, և՛ կանայք ընդունել են տնտեսական սպառնալիքների ազդեցությունը խաղաղության վրա, սակայն մասնավորապես կանայք, արտահայտել են ավելի խորը պատկերացումներ այն մասին, թե ինչպես են սպառնալիքներն ազդում խաղաղության վրա:

> *«Տնտեսական ճնշումները կարող են նպաստել հակամարտությանը և պատերազմին»:* (Իգական, մասնավոր հատվածի աշխատող, Տավուշի մարզի Բերդի սահմանամերձ գյուղական բնակավայր, 30-45 տարիքային խումբ)

Մտահոգությունները՝ ըստ տարիքային խմբերի. Երիտասարդ հարցվողները, հատկապես՝ քաղաքաբնակները, ավելի լավատեսորեն էին մոտենում խաղաղ միջավայրում տնտեսական հնարավորությունների ներուժին:

> *«Ես հույս ունեմ, որ մեր սահմանները կբացվեն և այլընտրանքային առևտրային ուղիների հետ մեկտեղ ազատ առևտուր կլինի»:* (Արական, պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Տնտեսական սպառնալիքների վերաբերյալ տեսակետները բազմազան են տարբեր զբաղվածություն ունեցող հարցվողների շրջանում: Որոշ անհատներ, հատկապես՝ մասնավոր/պետական հատվածում աշխատողները, կարևորել են տնտեսական կայունությունը: Մյուսները,

այդուհանդերձ, այն ավելի քիչ կարևոր են համարել՝ համեմատած ֆիզիկական անվտանգության անմիջական մտահոգություններին:

3. Կիբերանվտանգության սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 7.35).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Կիբերանվտանգության վերաբերյալ մտահոգություններն ավելի ցայտուն են արտահայտված քաղաքաբնակ հարցվողների շրջանում, ինչը վկայում է թվային միջավայրի ավելի մեծ տեղեկացվածության մասին: Այնուամենայնիվ, գյուղական բնակավայրերից հարցվողները նույնպես գիտակցում էին կիբերանվտանգության նշանակությունը խաղաղության պահպանման գործում:

> *«Կիբերպատերազմները և կիբերհանցագործությունները շատ վտանգավոր են այս դարաշրջանում, և մեդիա գրագիտության պակասն էլ ավելի է սրում խնդիրը»:* (Արական, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)

> *«Թե՛ ֆիզիկական և թե՛ թվային անվտանգությունը կարևոր են խաղաղ գոյակցության համար»:* (Իգական, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, Գեղարքունիքի մարզի Արտանիշի սահմանամերձ գյուղական բնակավայր, 45-60 տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Կիբերանվտանգությունը թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց կողմից էլ կարևորություն է ստացել, սակայն կանայք, հատկապես՝ գյուղական բնակավայրերից, հակված էին ավելի հաճախ ընդգծել դրա կարևորությունը:

> *«Համացանցում նկատելի թշնամանք կա»:* (Իգական, ուսանող, Տավուշի սահմանամերձ գյուղական բնակավայր, 18-30 տարիքային խումբ)

Մտահոգություններ՝ ըստ տարիքային խմբերի. Երիտասարդ հարցվողները ցույց են տվել կիբերանվտանգության սպառնալիքների մասին բարձր տեղեկացվածություն: Սա արտացոլում է սերնդափոխությունը դեպի ավելի մեծ թվային սպառողականության, ինչպես նաև առցանց դաշտի ռիսկերի գիտակցումը:

> *«Մենք հիբրիդային պատերազմի մեջ ենք, որտեղ բոլոր մեթոդները պետք է կիրառվեն թվային անվտանգության արժեքն ընդգծելու համար»:* (Իգական, ուսանող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Կիբերանվտանգության վերաբերյալ մտահոգությունը հատկապես ակնհայտ է ուսանողների և մասնավոր/պետական հատվածի աշխատողների շրջանում: Սա ցույց է տալիս զբաղվածությունների վրա թվային միջավայրերի ունեցած ազդեցության և կիբերանվտանգությունը՝ որպես չափազանց կարևոր խնդիր ճանաչելու միջև կապը:

4. Բնապահպանական սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 6.43).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Թե՛ գյուղական, թե՛ քաղաքային բնակավայրերի, հատկապես՝ Սևանա լճի մերձակայքում գտնվող բնակավայրերից հարցվողների շրջանում նկատելի մտահոգություն կա բնապահպանական սպառնալիքների վերաբերյալ: Սա վկայում է երկրի կայունության ավելի լայն համատեքստում շրջակա միջավայրի գործոնների կարևոր դերի գիտակցման մասին:

> *«Սևանա լճի էկոհամակարգի համար գոյություն ունեցող ռիսկը կարող է հանգեցնել ջրի սակավության՝ մեծ վտանգ ներկայացնելով խաղաղության*

> *համար»:* (Իգական, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Բնապահպանական մտահոգությունները միահամուռ կերպով ընդգծվում են և՛ տղամարդկանց, և՛ կանանց կողմից, որը ցույց է տալիս շրջակա միջավայրի առողջության և կայունության կարևորության ընդհանրական գիտակցումը:

Մտահոգությունները՝ ըստ տարիքային խմբերի. Տարեց հարցվողներն արտահայտում են խիստ մտահոգություն բնապահպանական խնդիրների վերաբերյալ: Սա, ամենայն հավանականությամբ, բխում է նրանց անմիջական փորձից և իրենց ապրուստի՝ տեղական էկոհամակարգերով պայմանավորված լինելու հանգամանքից:

> *«Սևանա լճի վատթարացող էկոհամակարգը, որն ազդում է ինչպես տեղական, այնպես էլ ազգային ռեսուրսների վրա, դարձել է հիմնախնդիր»:* (Արական, պետական հատվածի աշխատող, Գեղարքունիքի Արտանիշի սահմանամերձ գյուղական բնակավայր, 60+ տարիքային խումբ)

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Բնապահպանական խնդիրների վերաբերյալ իրազեկվածությունն ու մտահոգությունը առկա են տարբեր զբաղվածություն ունեցող խմբերում: Այս խնդրի լայն ճանաչումն արտացոլում է կոնսենսուս ընդհանուր կայունության համար շրջակա միջավայրի կայունության հույժ կարևորության վերաբերյալ:

5. **Քաղաքական և սոցիալական սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 7.76).**

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բոլոր բնակավայրերից հարցվողները հաստատում են խաղաղության հասնելու համար քաղաքական և սոցիալական կայունության կարևորությունը: Բնակավայրից անկախ գոյություն ունեցող այս ընդհանուր համաձայնությունն ընդգծում է հակամարտությունների կարգավորման և խաղաղության կառուցման գործընթացներում քաղաքական և սոցիալական ներդաշնակության պահպանման անհրաժեշտությունը: Հատկանշական է, որ տարբեր տարածաշրջաններից հարցվողներ մատնանշել են Հայաստանի քաղաքական և սոցիալական հավասարակշռության առջև ծառացած և՛ ներքին, և՛ արտաքին սպառնալիքների վերաբերյալ մտահոգություններ՝ հատուկ անդրադարձ կատարելով այն հարևան երկրներից բխող հնարավոր ռիսկերին, ինչպիսիք են Ռուսաստանը և Ադրբեջանը:

Սեռային ասպեկտը. Կին հարցվողները, հատկապես՝ սահմանամերձ շրջաններից, ընդգծում են ներքին հասարակական համերաշխության և կայունության խիստ անհրաժեշտությունը: Նրանց մեկնաբանությունները վկայում են այն խորը գիտակցության մասին, թե ինչպես կարող են ներքին տարաձայնությունները թուլացնել ազգի դիրքորոշումը և պոտենցիալ առավելություն տալ հակառակորդներին:

> *«Ներքին խաղաղության բացակայությունը կարող է շահագործվել արտաքին ուժերի կողմից».* (Իգական, ուսանող, Տավուշի սահմանամերձ գյուղական բնակավայր, 18-30 տարիքային խումբ)

Մտահոգությունները՝ ըստ տարիքային խմբերի. Տարեց հարցվողները, ինչպես 45-60 և 60+ տարիքային խմբերից, այնպես էլ տարբեր բնակավայրերից, զգալի մտահոգություններ են հայտնում սոցիալական անկայունության և միասնականության բացակայության վերաբերյալ: Այս մտահոգություններն

արտացոլում են այն խորն ընկալումը, թե ինչպես ներքին հակամարտությունները կարող են ազդել խաղաղության ընդհանուր ջանքերի վրա:

> *«Հասարակության ներսում համերաշխության բացակայությունը դժվար է դարձնում դրսում խաղաղություն փնտրելը»:* (Իգական, պետական հատվածի աշխատող, Գեղարքունիքի մարզի Արտանիշի սահմանամերձ գյուղական բնակավայր, 45-60 տարիքային խումբ)
>
> *«Մենք մշտապես պայքարում ենք ներքին համախմբվածության համար»:* (Իգական, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, Տավուշի ոչ սահմանամերձ գյուղական բնակավայր, 45-60 տարիքային խումբ)

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Այն ընկալումը, որ քաղաքական և սոցիալական սպառնալիքները խաղաղությանը վնաս հասցնող հանգամանքներ են, տարբեր մասնագիտական խմբերի մեջ տարածված կարծիքներ են: Այս կոնսենսուսը ընդգծում է այն համոզմունքը, որ քաղաքական և սոցիալական կայունությունը ոչ միայն քաղաքական խնդիր է, այլև հասարակական, որն իր հետևանքներն ունի կյանքի բոլոր ոլորտներում:

Բարեկեցության սպառնալիքների վերլուծություն՝ ըստ տարածաշրջանային, սեռային, տարիքային և զբաղվածության խմբերի

Նկ.8. Բարեկեցության կատեգորիայի սպառնալիքների միջին գնահատականները



6. **Բարեկեցության և ֆինանսական կայունության սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 7.53).**

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Սահմանամերձ շրջաններում հարցվողների տեսանկյունից բարեկեցությունը և ֆինանսական կայունությունը խստորեն փոխկապակցված են անվտանգությանը: Նրանք գտնում են, որ սոցիալական վատ պայմանները հանգեցնում են արտագաղթի, որն իր հերթին թուլացնում է ազգային անվտանգությունը:

> *«Բարեկեցության ցածր մակարդակը մարդկանց ստիպում է արտագաղթել՝ թողնելով իրենց պապենական օջախները՝ դրանով իսկ թուլացնելով երկրի անվտանգությունը»:* (Արական, պետական հատվածի աշխատող, Գեղարքունիքի Արտանիշի սահմանամերձ գյուղական բնակավայր, 60+ տարիքային խումբ)

Այդուհանդերձ, ոչ սահմանամերձ տարածքներում շատ հարցվողներ բարեկեցության խնդիրները համարում են կարևոր, բայց ոչ ուղղակիորեն կապակցված հակամարտությանը:

> *«Աղքատությունն ու անհավասարությունը խոչընդոտներ են առաջացնում դեպի խաղաղություն տանող ճանապարհին, բայց դրանք առանցքային չեն դրա հաստատման համար»:* (Իգական, թոշակառու, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 60+ տարիքային խումբ)
>
> *«Երբ հիմնական կարիքները, ինչպիսին օրինակ սնունդն է, բավարարված չեն, դժվար է դառնում խաղաղության մասին մտածելը»:* (Իգական, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Ե՛վ տղամարդ, և՛ կին հարցվողներն ընդունում են բարեկեցության խնդիրների ազդեցությունը, սակայն հատկապես կանայք ավելի խորը պատկերացումներ ունեն այն մասին, թե ինչպես են աղքատությունն ու անհավասարությունը ազդում խաղաղության վրա:

> *«Արտերկրում աշխատելու մեկնած տղամարդկանց երկարատև բացակայությունը կանանց անինքնավստահ է դարձնում կենցաղային և հողի հետ կապված պարտականությունները կատարելու հարցում»:* (Իգական, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, Տավուշի ոչ սահմանամերձ գյուղական բնակավայր, 45-60 տարիքային խումբ)

Մտահոգությունները՝ ըստ տարիքային խմբերի. Գյուղական բնակավայրերի տարեց բնակիչները, հատկապես՝ 60-ից բարձր, բարեկեցության ցածր մակարդակն ուղղակիորեն կապում են արտագաղթի հետ՝ ընդգծելով դրա խորը ազդեցությունը համայնքի կայունության վրա:

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Տարբեր զբաղվածություն ունեցող հարցվողների խմբերում բարեկեցության հետ կապված սպառնալիքների ընկալման մեջ էական տարբերություններ չկան:

7. Բավարար կենսամակարդակի սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 6.88).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Թե՛ քաղաքային, թե՛ գյուղական բնակավայրերի հարցվողները շեշտում են հիմնական ծառայությունների հասանելիության կարևորությունը: Գյուղաբնակ հարցվողները հատկապես կարևորում են գործնական խնդիրները, ինչպիսիք են ջրամատակարարմանն առնչվող հարցերը:

> *«Գյուղերում ջրի լուրջ խնդիրները խիստ ազդում են առօրյա կյանքի վրա»:* (Իգական, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, Տավուշի ոչ սահմանամերձ գյուղական բնակավայր, 45-60 տարիքային խումբ)
>
> *«Անբավարար կենսամակարդակը նույնպես նպաստում է արտագաղթին».* (Արական, մասնավոր կամ պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 30-45 տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Կենսամակարդակի վերաբերյալ ընկալումների մեջ սեռային հիմքով զգալի տարբերություններ չեն նկատվել:

Մտահոգությունները՝ ըստ տարիքային խմբերի. Ուսումնասիրությունը չի բացահայտել կենսամակարդակի վերաբերյալ տարիքով պայմանավորված հատուկ ընկալումներ:

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Կենսամակարդակի և բարեկեցության հետ կապված սպառնալիքների վերաբերյալ տեսակետների՝ զբաղվածությամբ պայմանավորված տարբերություններ չկան:

8. **Կայուն զբաղվածության սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 7.22).**

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Քաղաքային բնակավայրերում, մասնավորապես՝ Երևանում, զգալի ուշադրություն է դարձվում այն հանգամանքի վրա, թե ինչպես է գործազրկությունն ազդում երիտասարդների և տարածաշրջանային տնտեսության վրա:

> *«Կայուն զբաղվածությունը շատ կարևոր է, քանի որ դրա բացակայության պատճառով երիտասարդները դիմում են արտագաղթի, ինչն ազդում է տնտեսության բոլոր ոլորտների վրա, դատարկում է շրջանները և ապակայունացնում երկիրը»:* (Իգական, թոշակառու, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 60+ տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Կանայք առանձնապես մտահոգված են տղամարդկանց աշխատուժի բացակայության վրա զբաղվածության խնդիրների ունեցած ազդեցությունով, որոնք ազդում են ընտանիքի դինամիկայի և կայունության վրա:

> *«Ատոմակայանի փակումը, տղամարդկանց համար աշխատատեղերի կրճատումը խիստ մտահոգիչ են»:* (Իգական, ՏԻՄ աշխատակից, Արմավիրի ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, 18-30 տարիքային խումբ)

Մտահոգությունները՝ ըստ տարիքային խմբերի. Այս ուսումնասիրության մեջ զբաղվածության կայունության վերաբերյալ տարիքային հատուկ ընկալումներ չեն բացահայտվել:

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Տարբեր զբաղվածություն ունեցող հարցվողների խմբերում կայուն զբաղվածության վերաբերյալ տեսակետների էական տարբերություններ չկան:

9. **Սոցիալական ապահովության սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 6.89).**

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Գյուղաբնակ հարցվողները, հատկապես՝ սահմանամերձ շրջաններից, ընդգծում են սոցիալական ապահովության բացակայությունը՝ որպես համայնքների բնակչության պակասեցմանը նպաստող գործոն, որը կապված է անվտանգությանն առնչվող ավելի ընդարձակ հարցերի հետ:

> *«Համայնքներում սոցիալական ապահովության անբավարարությունը ցավալի է, քանի որ հանգեցնում է բնակչության պակասեցմանը, ինչը վտանգ է ներկայացնում սահմանամերձ գյուղերի համար:* (Իգական, պետական հատվածի աշխատող, Գեղարքունիքի Արտանիշի սահմանամերձ գյուղական բնակավայր, 45-60 տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Կին հարցվողները, հատկապես՝ գյուղական բնակավայրերից, ավելի շատ են բարձրաձայնում սոցիալական ապահովության համակարգերի թերությունների մասին:

Մտահոգությունները՝ ըստ տարիքային խմբերի. Միջին տարիքի (45-60) և ավելի բարձր տարիքի (60+) հարցվողները մեծ մտահոգություն են հայտնում սոցիալական ապահովության ասպեկտների վերաբերյալ՝ հաճախ այս խնդիրը գնահատելով ավելի կարևոր:

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Պետական հատվածում աշխատող հարցվողները ավելի մեծ մտահոգություն են հայտնում սոցիալական ապահովությանը սպառնացող վտանգների վերաբերյալ:

10. Կրթության և հմտությունների զարգացման սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 7.49).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Թե՛ սահմանամերձ, թե՛ ոչ սահմանամերձ քաղաքային շրջանների հարցվողներն ընդգծել են ներկայիս կրթական անբավարարության երկարաժամկետ ազդեցությունները ապագա խաղաղության և հասարակության զարգացման վրա: Մտահոգություններ են հնչել աղավաղված կրթական նյութերի և երիտասարդների շրջանում քննադատական մտածողության հմտությունների բացակայության վերաբերյալ:

> *«Կրթության և հմտությունների սպառնալիքները մենք կզգանք 20 տարի հետո՝ այս պահին գրված աղավաղված գրքերի և չսովորող, տարրական գիտելիքներ չունեցող, պատմություն չիմացող ու չզարգացող երիտասարդների շնորհիվ»:* (Իգական, թոշակառու, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 60+ տարիքային խումբ)
>
> *«Կրթության ոլորտը ամենակարևորն ու անհրաժեշտն է խաղաղության հաստատման համար»:* (Իգական, պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 60+ տարիքային խումբ)

Հետաքրքրական է, որ սահմանամերձ շրջաններում հարցվողները դիտարկում են անորակ կրթության խնդիրը նաև անվտանգության կամ ինքնության պահպանման համատեքստում:

> *«Կրթության ոլորտը պետք է հնարավորինս ուշադրության կենտրոնում լինի: Կարևոր է, որ պատմությունը գրվի ճիշտ, առանց աղավաղումների և կեղծ բովանդակության»:* (Իգական, ՏԻՄ աշխատակից, Սյունիքի սահմանամերձ բնակավայր, 18-30 տարիքային խումբ)
>
> *«Սերունդը շատ թույլ է, անգրագետ, չգիտի իր պատմությունը, պատմության գրքերը կեղծ տեղեկություններ են պարունակում, իսկ ուսուցիչները մտածել չեն սովորեցնում»:* (Իգական, թոշակառու, Տավուշի սահմանամերձ քաղաքային բնակավայր, 60+ տարիքային խումբ)

Այնուամենայնիվ, զգալի թվով պատասխաններ ցույց են տվել, որ հարցվողները ոչ բոլոր դեպքերում են լավ որակի կրթությունը կապում խաղաղության հետ:

> *«Ես դժվարանում եմ կրթությունը խաղաղության հետ կապել»:* (Իգական, պետական հատվածի աշխատող, Տավուշի Բերդի ոչ սահմանամերձ գյուղական բնակավայր, 45-60 տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Հիմնականում կանայք են, ովքեր ընդգծում են կրթության կարևորությունը կայուն և խաղաղ ապագա ստեղծելու գործում:

Մտահոգությունները՝ ըստ տարիքային խմբերի. Տարեց հարցվողները, հատկապես՝ 45-60 և բարձր տարիքի, ընդգծում են ճիշտ և անաչառ կրթական համակարգի անհրաժեշտությունը:

> *«Կրթական ծրագրերը դեռ շատ վատն են»:* (Իգական, ՏԻՄ աշխատակից, Բերդի սահմանամերձ քաղաքային բնակավայր, 45-60 տարիքային խումբ)

> *«Եթե մարդն անկիրթ է, նրան հեշտությամբ մանիպուլյացիայի են ենթարկում: Որակյալ կրթությունը կարևոր գործոն է կայուն ապագայի համար»:* (Արական, մասնավոր հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 45-60 տարիքային խումբ)

Հետաքրքրական է, որ երիտասարդ հարցվողներն ավելի շատ են տեսնում կապը պատշաճ կրթության և խաղաղության միջև:

> *«Ես հավատում եմ, որ կրթության մակարդակը բարձրացնելով՝ մենք կարող ենք հասնել խաղաղության հաստատմանը»:* (Իգական, պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)
>
> *«Կրթությունը, թերևս, ամենակարևոր կետն է և փոխկապակցված է մյուս բոլոր սպառնալիքների հետ: Որքան կրթված են մարդիկ, այնքան ավելի շատ են կարողանում հոգալ իրենց կենսական կարիքները և նոր արդեն մտածել խաղաղության մասին»:* (Իգական, պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)
>
> *«Կրթությունն ամեն ինչի հիմքն է: Եթե մենք ունենանք լավ կրթական համակարգ, երբ ուսուցիչը լինի կիրթ և բանիմաց, չտարածի ատելություն և չվնասի երեխաների հոգեկան ներաշխարհը, երբ ամեն ինչ իր տեղում լինի, մենք կկարողանանք ունենալ խաղաղության մասին մտածող հասարակություն»:* (Իգական, ուսանող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարեկան)

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Տարբեր զբաղվածություն ունեցող հարցվողների խմբերում կրթության վերաբերյալ տեսակետների էական տարբերություններ չկան:

11. Առողջապահական սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 6.70).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Բազմաթիվ ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայրերում հարցվողները հաճախ ընդգծում են մաքուր ջրի խնդիրը՝ առողջապահական անհավասարությունները քննարկելիս: Այս մտահոգությունները կապվում են նաև Հայաստանի անվտանգության ավելի լայն համատեքստի հետ:

> *«Մաքուր ջրի խնդիրն այս պահին շատ արդիական է Հայաստանի մարզերում, և դա կարող է սպառնալիք հանդիսանալ:* (Իգական, անհատ ձեռնարկատեր, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)
>
> *«Պատերազմների հիմնական պատճառը մաքուր ջրի ռեսուրսների բացակայությունն է»:* (Իգական, մասնավոր հատվածի աշխատող, Արմավիրի ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, 30-45 տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Տարբեր մարզերից, հատկապես քաղաքային բնակավայրերից կին հարցվողները էական մտահոգություններ են հայտնում առողջապահական անհավասարության վերաբերյալ՝ մատնանշելով հատկապես ջրային ռեսուրսները:

> *«Առողջապահական սպառնալիքները չափազանց կարևոր են և ինձ համար գլխավոր մտահոգությունն են»:* (Իգական, մասնավոր հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)
>
> *«Ջրային ռեսուրսներն անսպառ չեն, և դա կարող է լինել և դառնալ պատերազմի պատճառ: Կուզենայի նշել, որ մեր մաքուր ջրի մատակարարումն*

> *այժմ վտանգված է, և ամեն օր կարող են թունավորումներ լինել: Ասեմ ավելին. հանքարդյունաբերությունը սպառնալիք է և կարող է արագացնել մաքուր ջրի սպառումը՝ հանգեցնելով աղետների»:* (Իգական, պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)

Մտահոգությունները՝ ըստ տարիքային խմբերի. Առողջապահական սպառնալիքների վերաբերյալ ընկալումների մեջ տարիքով պայմանավորված էական տարբերություններ չկան, ինչը ցույց է տալիս խնդրի վերաբերյալ համատարած մտահոգությունը:

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Առողջապահական սպառնալիքների վերաբերյալ ընկալման մեջ զբաղվածությամբ պայմանավորված տարբերություններ ևս չկան, ինչը ենթադրում է այս սպառնալիքների վերաբերյալ ընդհանուր տեսակետը տարբեր մասնագիտական ոլորտներում:

Ազատության սպառնալիքների վերլուծություն՝ ըստ տարածաշրջանային, սեռային, տարիքային և զբաղվածության խմբերի

Նկ.9. Ազատության կատեգորիայի սպառնալիքների միջին գնահատականները



12. Ժողովրդավարության և ազատության սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 7.02).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Ժողովրդավարության և ազատության վերաբերյալ բացահայտվել է կարծիքների լայն շրջանակ. որոշ անհատներ դրանք համարում են կայունության համար առանցքային, մինչդեռ մյուսները դրանք ընկալում են որպես անվտանգության հնարավոր սպառնալիքներ: Հատկանշական է, որ այս բազմազան տեսակետները չեն տարբերվում՝ պայմանավորված որևէ տարածաշրջանային գործոններով, ինչը հուշում է, որ ժողովրդավարության և ազատության վերաբերյալ մտահոգությունները մշտապես գոյություն ունեն տարբեր մարզերում:

> *«Սահմանափակումները որոշ չափով անհրաժեշտ են, դա անվտանգության խնդիր է»:* (Արական, թոշակառու, Տավուշի Մովսեսի սահմանամերձ գյուղական բնակավայր, 60+ տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Ուսումնասիրությունը չի բացահայտել սեռային հիմքով որևէ էական տարբերություն ժողովրդավարության և ազատության սպառնալիքների ընկալումներում:

Տատանումները՝ ըստ տարիքային խմբերի. Տարեց հարցվողների շրջանում, հատկապես՝ 60 և ավելի տարիքի, նկատվում էին որոշակի սահմանափակումները որպես անվտանգության ապահովման համար անհրաժեշտություն դիտարկելու միտում:

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Ժողովրդավարության և ազատության սպառնալիքների ընկալումները էականորեն չեն տարբերվել տարբեր զբաղվածություն ունեցող խմբերի միջև:

13. Արդյունավետ ժողովրդավարական կառավարման սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 6.99).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Ուսումնասիրությունը ցույց է տվել ժողովրդավարական կառավարման սպառնալիքների վերաբերյալ քաղաքային և գյուղական հարցվողների միջև ընկալումների նվազագույն տարբերություններ, ընդ որում՝ քաղաքաբնակ հարցվողներն ավելի մեծ ուշադրություն են դարձրել այս սպառնալիքին: Այնուամենայնիվ, սահմանամերձ և ոչ սահմանամերձ տարածքների պատասխանների միջև էական տարբերություն չի դիտարկվել:

Սեռային ասպեկտը. Թե՛ կին, թե՛ տղամարդ հարցվողները մտահոգություն են հայտնել ժողովրդավարական կառավարման վերաբերյալ: Տղամարդիկ, մասնավորապես՝ քաղաքային բնակավայրերից, ընդգծել են թափանցիկության և հաշվետվողականության կարևորությունը:

> *«Ամեն ինչ կախված է արդյունավետ ժողովրդավարական կառավարումից»:* (Արական, մասնավոր հատվածի աշխատող, Սյունիքի կապանի ոչ սահմանամերձ գյուղական բնակավայր, 18-30 տարիքային խումբ)
>
> *«Կոռուպցիան սպառնալիք է, այն միշտ եղել է, նույնիսկ Խորհրդային Միության ժամանակ, և չի վերանա»:* (Արական, չի աշխատում, սահմանամերձ քաղաքային բնակավայր Բերդ, Տավուշ, 45-60 տարիքային խումբ)

Տատանումները՝ ըստ տարիքային խմբերի. Ուսումնասիրությունը չի բացահայտել արդյունավետ ժողովրդավարական կառավարման սպառնալիքների ընկալման տարբերություններ՝ պայմանավորված տարիքային խմբով:

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Հարցման ժամանակ տրված պատասխանները տարբերվում են՝ պայմանավորված հարցվողի զբաղվածությամբ: Մասնավոր և պետական հատվածի աշխատողներն ավելի հաճախ են ընդգծում արդյունավետ ժողովրդավարական կառավարման սպառնալիքները, քան տեղական ինքնակառավարման մարմինների կամ պետական հաստատությունների ներկայացուցիչները:

14. Խոսքի ազատության սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 6.41).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Քաղաքաբնակ հարցվողները, մասնավորապես՝ Երևանում, խոսքի ազատության վերաբերյալ տարբեր մտահոգություններ են հայտնել: Ոմանք պաշտպանում են վերահսկվող արտահայտումը՝ կանխելու ապատեղեկատվությունը՝ գիտակցելով ազատ խոսքի և պատասխանատու հաղորդակցության միջև նուրբ հավասարակշռությունը:

> *«Ինձ համար ժողովրդավարության հենասյուներից մեկը խոսքի ազատությունն է, բայց Հայաստանում մարդիկ չեն կարողանում դա ճիշտ օգտագործել... Բայց եթե պետության կողմից սահմանափակումներ կան, ապա դա լուրջ սպառնալիք է»:* (Իգական, գործազուրկ, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 30-45 տարիքային խումբ)
>
> *«Իհարկե, սա գնահատում եմ 10, բայց կարծում եմ, որ այս պահին Հայաստանում խոսքի ազատության, լրագրողներին ահաբեկելու և այլ նման սպառնալիքներ չկան...»* (Իգական, ուսանող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան. 18-30 տարիքային խումբ)

Ի տարբերություն վերոնշյալի, ըստ որոշ տեսակետների՝ թեև խոսքի ազատությունը կարևոր է, այն ուղղակիորեն կապված չէ արժանապատիվ և երկարատև խաղաղության հեռանկարների հետ:

> *«Դա ներքին հակամարտությունների պատճառ է... Բայց ես չեմ կարծում, որ սա սպառնում է արժանապատիվ ու երկարաժամկետ խաղաղության հաստատմանը»:* (Իգական, պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Կին հարցվողները, հատկապես՝ քաղաքային բնակավայրերից, ընդգծում են պատասխանատու ազատ խոսքի կարևորությունը և ապատեղեկատվության ազդեցությունը:

Տատանումները՝ ըստ տարիքային խմբերի. Երիտասարդ հարցվողները (18-30), հատկապես՝ քաղաքային միջավայրում, ցույց են տալիս բարձր տեղեկացվածություն և մտահոգություն խոսքի ազատության նրբությունների վերաբերյալ:

> *«Այս պահին կարծում եմ, որ Հայաստանում խոսքի ազատությունը սահմանափակված չէ, բայց եթե լինեն պարտադրված սահմանափակումներ, դա կլինի ամենալուրջ սպառնալիքներից մեկը»:* (Իգական, պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Ուսումնասիրությունը չի բացահայտել խոսքի ազատության սպառնալիքների ընկալման զգալի տարբերություններ՝ պայմանավորված հարցվողների զբաղվածությամբ, ինչը ցույց է տալիս միատեսակ ընկալում տարբեր մասնագիտական ոլորտներում:

15. Մարդու իրավունքների խախտման սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 7.24).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Մարդու իրավունքների ներքին խախտումների վերաբերյալ ընդհանուր մտահոգությունը, որը հանգեցնում է սոցիալական անկարգությունների, ակնհայտ է տարբեր մարզերում: Հարցվողներն ընդունում են, որ նման խախտումները կարող են սրել արտաքին սպառնալիքները:

> *«Մարդու իրավունքների խախտումները կհանգեցնեն հանրահավաքների ու անկարգությունների, ինչը կարող է արտաքին սպառնալիքների սրման հնարավորություն տալ»:* (Արական, պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 30-45 տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Տղամարդ հարցվողները, մասնավորապես՝ քաղաքային բնակավայրերից, ընդգծում են մարդու իրավունքների խախտումների ավելի լայն հետևանքները՝ նշելով արտաքին սպառնալիքները սրելու դրանց ներուժը:

Տատանումները՝ ըստ տարիքային խմբերի. Մարդու իրավունքների հետ կապված մտահոգությունը հատկապես արտահայտված է միջին տարիքի հարցվողների շրջանում:

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Ուսումնասիրությունը ցույց է տալիս տարբեր զբաղվածության ոլորտներում մարդու իրավունքների սպառնալիքների շեշտադրման նկատելի տարբերություն: Մասնավոր և պետական հատվածի աշխատողները հակված են ավելի խորությամբ արտահայտվել ներքին սպառնալիքների մասին, մինչդեռ տեղական ինքնակառավարման մարմիններում կամ պետական հաստատություններում հարցվողներն ավելի մեծ մտահոգություն են հայտնում մարդու իրավունքներին ուղղված արտաքին սպառնալիքների վերաբերյալ: Այս խումբը հաճախ է վկայակոչում հայերի կողմից 44-օրյա պատերազմի և դրան հաջորդած Լեռնային Ղարաբաղից հայ բնակչության արտագաղթի ժամանակ մարդու իրավունքների խախտումները:

16. Քաղաքացիական ազատություններին սպառնացող վտանգներ (Միջին գնահատականը՝ 6.19).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Քաղաքացիական ազատությունների վերաբերյալ հարցվողների տեսակետները տարբեր էին. ոմանք նշում էին, որ Հայաստանում քաղաքացիական ազատություններին վերաբերող խնդիրներ գոյություն չունեն, իսկ մյուսները մտահոգություններ էին հայտնում դրանց գործնական կիրառման վերաբերյալ: Չնայած այս տարբերվող տեսակետներին, ուսումնասիրությունը չի բացահայտել որևէ հստակ հարաբերակցություն՝ պայմանավորված մարզերով:

> *«Մեր երկրում չկա քաղաքացիական ազատությունների հետ կապված խնդիր, դրա համար ես սա 3 եմ գնահատում»:* (Իգական, ՏԻՄ ոլորտի աշխատող, Արմավիրի ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, 18-30 տարիքային խումբ)
>
> *«Դա սպառնալիք չէ, քանի որ Հայաստանում քաղաքացիական ազատությունները սահմանափակված չեն, և ցանկացած անձ կամ խումբ կարող է բարձրաձայնել իրենց մտահոգությունները, հանրահավաքներ անել, և դա օրենքով չի խոչընդոտվի»:* (Իգական, պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 60+ տարիքային խումբ)
>
> *«Ելնելով վերջին ցույցերից՝ Հայաստանում կարծես թե հավաքների ազատություն կա, բայց մենք հաճախ նկատում ենք ոստիկանության կամայականությունը»:* (Իգական, պետական հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Այս սպառնալիքն ավելի բարձր գնահատական է ստացել տղամարդկանց կողմից:

Տատանումները՝ ըստ տարիքային խմբերի. Տարեց հարցվողներն ավելի շատ թերահավատություն են ցուցաբերել քաղաքացիական ազատությունների իրական սպառման նկատմամբ, որը ենթադրում է տարիքով պայմանավորված ընկալման տարբերություն:

> *«Մեզ համար սա հիմա ձևականություն է, տեսականորեն կարելի է խաղաղ ցույցեր կազմակերպել, մասնակցել, բայց եթե իշխանությունը չհամագործակցի, գալիս են քեզ ձեռնաշղթաներ են կապում, իսկ դա շատ վատ է:* (Իգական, թոշակառու, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 60+ տարիքային խումբ)

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Քաղաքացիական ազատություններին առնչվող հարցերի պատասխանները զանազան են տարբեր զբաղվածություններ ունեցող անձանց շրջանում, ընդ որում՝ պետական հատվածի աշխատողները հակված են ավելի քննադատաբար վերաբերվել քաղաքացիական ազատությունների վիճակին:

17. Սոցիալական և մշակութային ճնշումների սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 6.49).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Հատկապես սահմանամերձ շրջաններում էական մտահոգություն կա մշակութային ժառանգության և ավանդույթների պահպանման վերաբերյալ:

Սեռային ասպեկտը. Կին հարցվողները մտահոգություններ են հայտնում մշակութային ճնշումների և ինքնության վրա դրանց ունեցած ազդեցության վերաբերյալ:

Տատանումները՝ ըստ տարիքային խմբերի. Երիտասարդ հարցվողներն ավելի զգայուն են սոցիալական և մշակութային ճնշումների խնդիրների նկատմամբ:

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Ուսանողները և պետական հատվածի աշխատողները մեծապես գիտակցում են այս սպառնալիքների կարևորությունը:

Ինքնության սպառնալիքների վերլուծություն՝ ըստ տարածաշրջանային, սեռային, տարիքային և զբաղվածության խմբերի

Նկ.10. Ինքնության կատեգորիայի սպառնալիքների միջին գնահատականները



18. Հավասարության, ներառականության և անկողմնակալության սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 6.54).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Սահմանամերձ բնակավայրերի հարցվողները, համեմատած ոչ սահմանամերձ շրջանների բնակիչների հետ, ավելի բարձր գնահատականներ են տվել այս բաժնի սպառնալիքներին: Նրանք առաջին հերթին մտահոգություն են հայտնել փոքրամասնությունների ճնշումների վերաբերյալ՝ հղում կատարելով պատմական իրադարձություններին, երբ Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում հայ բնակչությունը ճնշումների է ենթարկվել մինչև Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմը:

Սեռային ասպեկտը. Կին հարցվողների շեշտադրումը փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող ճնշումների վրա արտացոլում է սեռային զգայունությունը հավասարության և ներառականության հարցերի նկատմամբ: Հետազոտության մեջ կանանց պատասխանները վկայում են փոքրամասնությունների խմբերի

իրավունքների և վերաբերմունքի վերաբերյալ հատուկ իրազեկվածության և մտահոգության մասին: Սեռային տեսանկյունից այս բացահայտումը ցույց է տալիս, որ կանայք կարող են ավելի հարմարվողական լինել կամ ազդեցություն կրել սոցիալական բացառման և խտրականության դինամիկայից:

Տատանումները՝ ըստ տարիքային խմբերի. Ուսումնասիրությունը չի բացահայտել հավասարության, ներառականության և անկողմնակալության հետ կապված սպառնալիքների ընկալման մեջ տարիքային զգալի տարբերություններ: Սա վկայում է այն մասին, որ այս խնդիրների վերաբերյալ մտահոգությունները մշտապես արտահայտվում են տարբեր տարիքային խմբերի կողմից:

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Ուսումնասիրությունը չի բացահայտել որևէ էական տարբերություն հավասարության, ներառականության և անկողմնակալության սպառնալիքների վերաբերյալ ընկալումների մեջ՝ պայմանավորված հարցվողների զբաղվածությամբ:

19. Մշակութային բազմազանության և ժառանգության պահպանման սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 7.48).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Ե՛վ գյուղական, և՛ քաղաքային սահմանամերձ բնակավայրերի հարցվողները խիստ մտահոգություն են հայտնել մշակութային ժառանգության սպառնալիքների վերաբերյալ՝ գնահատելով դրանք ավելի բարձր, քան ոչ սահմանամերձ բնակավայրերի հարցվողները: Նրանք մասնավորապես անդրադարձել են 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում հայկական ժառանգության նկատմամբ վատ վերաբերմունքի վերջին օրինակներին:

Սեռային ասպեկտը. Քաղաքային բնակավայրերից կին հարցվողները մտահոգություն են հայտնել մշակութային ձուլման վերաբերյալ՝ ընդգծելով մշակութային բազմազանության պահպանման կարևորության գիտակցումը:

Տատանումները՝ ըստ տարիքային խմբերի. Տարեց հարցվողները, հատկապես՝ 60-ն անց, խոր մտահոգություն են հայտնել մշակութային բազմազանության և ժառանգության պահպանման վերաբերյալ, ինչը հավանաբար պայմանավորված է ավելի երկար պատմական ընկալում ունենալով:

> *«Մենք ականատես եղանք այնքան բացասական գործողությունների իրենց [Ադրբեջանի] կողմից, որ մեր ակնկալիքները որևէ դրական բանի համար նվազագույն են»:* (Իգական, մասնավոր հատվածի աշխատող, Տավուշի մարզի սահմանամերձ գյուղական բնակավայր, 60+ տարիքային խումբ)

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Պետական հաստատություններում աշխատողները կարծես թե առանձնապես գիտակցում են մշակութային բազմազանությանն ու ժառանգությանը սպառնացող վտանգները, ինչը ենթադրում է կապ նրանց մասնագիտական դերերի և այս խնդիրները հասկանալու միջև:

20. Ինքնության ճնշման սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 6.79).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Հակամարտության գոտիներին ավելի մոտ գտնվող սահմանամերձ բնակավայրերի հարցվողներն ավելի բարձր գնահատական են տվել ինքնության ճնշման սպառնալիքներին: Այս խորը մտահոգությունը, ամենայն հավանականությամբ, բխում է հակամարտության հետ նրանց ունեցած անմիջական առերեսումից և մշակութային ու ինքնության արտահայտման վրա դրա ունեցած ազդեցությունից:

Սեռային ասպեկտը. Կանայք, հատկապես՝ քաղաքային բնակավայրերից, ընդգծում են ինքնության ճնշման լրջությունը, որը ցույց է տալիս այդ սպառնալիքների սեռային ընկալումը:

Տատանումները՝ ըստ տարիքային խմբերի. Քաղաքային բնակավայրերի երիտասարդ հարցվողները (18-30) նշում են, որ գիտակցում են այս հարցի ուղղությամբ լուրջ աշխատանք տանելու անհրաժեշտությունը, ինչը ցույց է տալիս սերունդների մտահոգությունը ինքնության արտահայտման վերաբերյալ:

> *«Այս պահին այս խնդրի լուծումը լուրջ առաջնահերթություն պետք է լինի».* (Իգական, մասնավոր հատվածի աշխատող, ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, Երևան, 18-30 տարիքային խումբ)

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Մասնավոր և պետական հատվածներում աշխատող անհատները, հատկապես քաղաքային միջավայրում գտնվող անձինք, ցուցաբերում են ինքնության ճնշման դեմ պայքարի կարևորության խորը գիտակցում:

21. Կարծրատիպերի ձևավորման և տարածման սպառնալիքներ (միջին գնահատականը՝ 6.93).

Տատանումները՝ ըստ բնակավայրերի. Սահմանամերձ շրջաններից հարցվողները մտահոգություն են հայտնում բացասական կարծրատիպերի և դրանց ազդեցության վերաբերյալ, որը մատնանշում է Ադրբեջանում լրատվամիջոցների և կրթական խոսույթների նկատմամբ զգայունությունը և ընդգծում է հակամարտությունից տուժած հասարակությունների միջև լիակատար անվստահության հետ կապված խնդիրները:

> *«Վերջին 30 տարիների ընթացքում մենք ձեռնպահ ենք մնացել բացասական կարծրատիպեր ձևավորելուց և գիտակցաբար խուսափել ենք մեր երեխաների մեջ ագրեսիա սերմանել: Մենք նրանց վրա չենք ազդել ատելության խոսքերով, ինչը հակասում է Ադրբեջանի որդեգրած մոտեցմանը»:* (Իգական, մասնավոր հատվածի աշխատող, Տավուշի մարզի Բերդի ոչ սահմանամերձ քաղաքային բնակավայր, 60+ տարիքային խումբ)

Սեռային ասպեկտը. Պատասխաններում առանձնահատուկ սեռային տատանումներ չեն դրսևորվել:

Տատանումները՝ պայմանավորված տարիքային խմբով. Վերլուծությունը չի բացահայտել որևէ հատուկ տարիքային տարբերություն կարծրատիպերի ձևավորման և դրանց տարածման սպառնալիքների ընկալման մեջ:

Տատանումները՝ ըստ զբաղվածության. Հարցվողների շրջանում կարծրատիպերի ձևավորման և տարածման սպառնալիքների ընկալման մեջ զգալի տարբերություններ չեն նկատվել՝ պայմանավորված հարցվողների զբաղվածությամբ:

Այլ կապեր

Բարեկեցության և ինքնության միջև հարաբերակցություն

Վերլուծությունը ցույց է տալիս, որ բարեկեցության սպառնալիքները, ինչպիսիք են ֆինանսական կայունությունը, պատշաճ կենսամակարդակը, կայուն զբաղվածությունը և սոցիալական ապահովությունը, էապես կարևորվում են: Բացի այդ, բարձր են գնահատվում ինքնության սպառնալիքները, ներառյալ՝ հավասարությունը և մշակութային բազմազանությունը: Այս երկու կատեգորիաները փոխկապակցված են սահմանամերձ բնակավայրերի հարցվողների շրջանում, ովքեր բարձր գնահատականներ են տվել անվտանգության սպառնալիքներին՝ նաև առաջնահերթություն տալով ինքնության սպառնալիքներին (դրանք գնահատելով 8 և բարձր): Այս հարաբերակցությունը ցույց է տալիս, որ այն անհատները, ովքեր մտահոգված են իրենց բարօրությամբ և բարեկեցությամբ, հավանաբար, մտահոգված կլինեն ինքնության և մշակույթի պահպանման հետ կապված հարցերով ևս:

Ազատության և ժողովրդավարության միջև հարաբերակցություն

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ հարցվողները, ընդհանուր առմամբ, ազատության սպառնալիքները (օրինակ՝ ժողովրդավարությունը, ժողովրդավարական կառավարումը և քաղաքացիական ազատությունները) գնահատել են ավելի ցածր՝ սակավ կարևորություն տալով դրանց: Այստեղից կարելի է ենթադրել, որ կայացած ժողովրդավարական ինստիտուտներ ունեցող տարածքներում հարցվողների կարծիքով շատ չեն ազատության հետ կապված սպառնալիքները: Ի տարբերություն վերջինիս, նվազ ժողովրդավարական համատեքստ ունեցող տարածաշրջաններում հարցվողները կարող են առավել մեծ կարևորություն տալ ազատության հետ կապված սպառնալիքներին:

Բացահայտված դիլեմաներ և հակասություններ

Անվտանգությունն ընդդեմ ազատության. Ֆիզիկական անվտանգության ձգտման և քաղաքական ազատությունների ու մարդու իրավունքների անհրաժեշտության միջև կա նկատելի լարվածություն: Որոշ հարցվողներ որոշակի սահմանափակումները համարում են անվտանգության համար կարևոր, ինչը պոտենցիալ կերպով հակասում է ժողովրդավարության և ազատ արտահայտման սկզբունքներին: Հատկանշական է, որ անվտանգության և ժողովրդավարական արժեքների միջև այս հակամարտությունը երկար տարիներ եղել է Հայաստանում քննարկվող հիմնական թեմաներից մեկը: Այս հարցը հիմք է հանդիսացել Մասաչուսեթսի Սթոունհիլ քոլեջի պրոֆեսոր Աննա Օհանյանի ակադեմիական հետազոտության[vii] համար: Պրոֆեսոր Օհանյանն իր աշխատությունում ընդգծում է հայկական համատեքստում անվտանգության և ժողովրդավարության միջև ընտրություն կատարելու պարտադրանքի ռիսկերը:

Տնտեսական կայունությունն ընդդեմ խաղաղության.

Թեև տնտեսական կայունությունը լայնորեն համարվում է խաղաղության համար կարևոր նշանակություն ունեցող գործոն, սահմանամերձ շրջաններից բազմաթիվ հարցվողներ չեն ընկալում տնտեսական գործոնները որպես խաղաղության անմիջական խոչընդոտներ: Փոխարենը, բանավեճը կենտրոնանում է այս ասպեկտի առաջնահերթության վրա, թե արդյո՞ք տնտեսական կայունությունը խաղաղության նախապայման է, թե՞ երկարաժամկետ խաղաղության հաստատման արդյունք: Կարծիքների այս բազմազանությունը ցույց է տալիս հակամարտությունների կարգավորման և խաղաղության հաստատման ջանքերում տնտեսական պայմանների կարևորության վերաբերյալ տարբեր պատկերացումներ:

Մշակույթի պահպանումն ընդդեմ ինտեգրման. Մշակութային բազմազանության և ժառանգության պահպանման կարևորումը ենթադրում է հնարավոր լարվածություն ինտեգրման և համակեցության ջանքերի նկատմամբ: Կա մշակութային ձուլման մտավախություն, ինչը վկայում է մշակութային ինքնության նկատմամբ պաշտպանական դիրքորոշման մասին:

Ընկալումների տարբերությունները՝ ըստ մարզերի. Թեև մարզերում առկա են ընդհանուր մտահոգություններ, որոշ սպառնալիքների ինտենսիվությունը, ինչպիսիք են մշակութային պահպանման վտանգները և տնտեսական անկայունությունը, սահմանամերձ և ոչ սահմանամերձ տարածքներում տարբերվում են՝ արտացոլելով տարբեր փորձառություններ և առաջնահերթություններ:

Ուսումնասիրության արդյունքների ընդգրկումը հայ-ադրբեջանական խաղաղության համաձայնագրում. պայմանագրի մշակման հիմունքները.

Հայաստանի և Ադրբեջանի միջև համապարփակ խաղաղության պայմանագրի մշակումն ու իրագործումը, որն արդյունավետորեն կանդրադառնա այս ուսումնասիրության մեջ բացահայտված բարդություններին, դժվարին մարտահրավեր է: Այս դժվարությունը պայմանավորված է մի շարք կարևոր գործոններով. իրավունքների ոտնահարման խորը արմատավորված պատմությամբ, ուժերի զգալի անհավասարակշռությամբ և դիվանագիտության մեջ ուժի կիրառմամբ, մրցակցող միջնորդական ջանքերով տարածաշրջանային մասնատված սցենարով և կայուն խաղաղության համաձայնագրերի համար շարունակաբար բարդացող գլոբալ լանդշաֆտով: Այս տարրերն ընդգծում են Հարավային Կովկասի տարածաշրջանի բարդ բնույթը և դրա լայնածավալ աշխարհաքաղաքական հետևանքները:

Այնուամենայնիվ, այս ուսումնասիրության առաջնային նպատակն է բարձրացնել ինչպես սահմանամերձ, այնպես էլ ոչ սահմանամերձ համայնքներից մարդկանց ձայնը՝ հնարավորություն տալով նրանց արտահայտել իրենց հատուկ կարիքներն ու մտահոգությունները: Այս հետազոտությունը ընդգծում է սոսկ պայմանագիր ստորագրելուց վեր գործելու անհրաժեշտությունը: Որպեսզի խաղաղության համաձայնագիրը արդյունավետ լինի, այն պետք է ընդգրկի սոցիալ-տնտեսական, անվտանգության և մշակութային միջավայրերի վերաբերյալ խորը պատկերացում, որտեղ այն կիրառվելու է: Նման ամբողջական մոտեցման որդեգրումը էական նշանակություն ունի ապագա հակամարտությունների ներուժի զգալիորեն նվազեցման և տարածաշրջանում կայունության ամրապնդման համար:

«Խաղաղության երկխոսության» այս նախաձեռնության կարևոր տարր է հանդիսանում «հասարակ մարդկանց» ներգրավվածությունը տարբեր տեղական և միջազգային, կառավարական և հասարակական կազմակերպությունների համար հնարավոր գործողությունների ուղիների և հետագծերի ձևավորման գործում: Այս մոտեցումը նպաստում է, որ խաղաղության գործընթացներն առաջնորդվեն հակամարտության հետևանքով ուղղակիորեն տուժածների կարիքներով ու շահերով՝ բավարարելով վերջիններս: Խաղաղության պայմանագիրը, հիմնված այս կարիքահեն ուսումնասիրության արդյունքների վրա, կհանդիսանա ոչ միայն որպես հակամարտության անհապաղ կարգավորման մեխանիզմ, այլ որպես տարածաշրջանում երկարատև խաղաղության և կայունության հաստատման ուղեցույց: Այն պահանջում է թե՛ Հայաստանի, թե՛ Ադրբեջանի կողմից մեծագույն ջանքերի գործադրում՝ ուղղված իրենց բնակչության բազմակողմանի կարիքները հոգալուն, ինչը կապահովի, որ պայմանագիրը լինի ավելին, քան սոսկ դիվանագիտական համաձայնություն և կառաջարկի կայուն խաղաղության ու զարգացման շրջանակ:

Այս հրապարակումը, ինչպես արդեն նշվել է, հիմնված է բացառապես Հայաստանում իրականացված ուսումնասիրությունների վրա: Կարևոր է հաշվի առնել, որ այս ուսումնասիրությունը չի ներառում հարցազրույցներ Լեռնային Ղարաբաղից տեղահանվածների հետ: Բացի այս, շուտով կհրապարակվի ավելի համապարփակ զեկույց, որը կներկայացնի մարդկանց կարիքների վրա կենտրոնացած ֆոկուս խմբերի քննարկումները: Այս ընթացիկ զեկույցը չի ներառում «Խաղաղության երկխոսություն» հկ-ի գործընկերների կողմից Ադրբեջանում իրականացված

հարցազրույցները: Հետևաբար, այստեղ ներկայացվող առաջարկությունները պետք է դիտարկվեն որպես քաղաքական գործիչների, փորձագետների և խաղաղաշինությամբ զբաղվողների միջև շարունակական քննարկումների հիմք: Դրանք նաև կարող են հանդիսանալ Հայաստանի և Ադրբեջանի հասարակական խմբերի ներկայացուցիչների միջև երկխոսության հիմք:

Այս համապարփակ ուսումնասիրության արդյունքների ընդգրկումը Հայաստանի և Ադրբեջանի միջև հայեցակարգային խաղաղության պայմանագրի մեջ ներառում է մանրակրկիտ շրջանակի ստեղծում, որը կանդրադառնա անվտանգության, բարեկեցության, ազատության և ինքնության ոլորտներին: Սրանցից յուրաքանչյուրը ներառում է կոնկրետ խնդիրներ, որոնք կարևորվել են ուսումնասիրության ընթացքում հարցվողների կողմից: Ստորև առաջարկում ենք, թե ինչպես կարող են այս բացահայտումները վերածվել պայմանագրի դրույթների.

Հատուկ դրույթներ անվտանգության կատեգորիայի համար

- Հաստատել ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և փոխադարձ հարգանքի սկզբունքներ, որոնք հիմք են հանդիսանում պայմանագրի համար:
- Մեկնարկել Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանազատման և սահմանագծման գործընթացները: Անկողմնակալություն և արդյունավետություն ապահովելու համար նախընտրելի է ներգրավել միջազգային միջնորդների: Այս գործընթացը առաջնահերթություն կտա սահմանամերձ համայնքների հատուկ կարիքներին՝ կենտրոնանալով հիմնական բնական և տեխնիկական ռեսուրսների արդարացի և անաչառ հասանելիության վրա: Այս ռեսուրսները ներառում են արոտավայրերը, դաշտերը, ջրային աղբյուրները և այլ կարևոր ակտիվներ, որոնք կենսական նշանակություն ունեն այս համայնքների պահպանման և բարգավաճման համար:
- Հաստատել մշտական զինադադար և ստեղծել ապառազմականացված գոտիներ, հատկապես՝ խիստ վիճելի տարածքներում:
- Իրականացնել անվտանգության համատեղ նախաձեռնություններ, հնարավորության դեպքում՝ միջազգային հսկողության ներքո՝ ֆիզիկական անվտանգությունն ապահովելու և ագրեսիայի գործողությունները կանխելու նպատակով: Որպես հնարավոր քայլ կարող է ստեղծվել Խաղաղության պահպանման և մոնիթորինգի համատեղ հանձնաժողով: Այս նախաձեռնությունը կարող է արդյունավետորեն իրականացվել ԵՄ Անվտանգության և պաշտպանության ընդհանուր քաղաքականություն առաքելության առաջնորդությամբ: Հանձնաժողովը կներառի ներկայացուցիչներ ինչպես Հայաստանից, այնպես էլ Ադրբեջանից՝ վերահսկելու հրադադարի մասին պայմանավորվածությունների կատարումը և կանխելու էսկալացիաները:
- Մշակել միջսահմանային տնտեսական նախաձեռնություններ, որոնք կարող են օգուտ բերել երկու երկրներին՝ խթանելով տնտեսական կայունությունը և նվազեցնելով հակամարտության հավանականությունը ռեսուրսների մրցակցության պատճառով:

Հատուկ դրույթներ բարեկեցության կատեգորիայի համար

- Բոլոր քաղաքացիներին ապահովել հիմնական ծառայություններից օգտվելու հնարավորությամբ, ինչպիսիք են բնակարանը, սնունդը և առողջապահությունը: Օրինակ՝ տուժած տարածքներում վերակառուցել և բարելավել ենթակառուցվածքները՝ ապահովելով հիմնական ծառայություններից օգտվելը, ինչպիսիք են առողջապահությունը, էլեկտրաէներգիան և ջրամատակարարումը:



- Ստեղծել աշխատանքի հնարավորություններ և իրականացնել կայուն զբաղվածության խթանման ծրագրեր, մասնավորապես՝ սահմանամերձ բնակավայրերում: Օրինակ՝ իրականացնել տնտեսական զարգացման ծրագրեր՝ ֆինանսական կայունությունը բարձրացնելու և տնտեսական դժվարությունների պատճառով գաղթը նվազեցնելու նպատակով:
- Հզորացնել սոցիալական ապահովության համակարգերը՝ բոլորին համարժեք աջակցություն ցուցաբերելու նպատակով, հատկապես՝ սահմանամերձ գյուղական համայնքներում:

Հատուկ դրույթներ ազատության կատեգորիայի համար

- Հանձն առնել ժողովրդավարական սկզբունքներին, թափանցիկությանը և արդյունավետ կառավարմանը՝ հասցեագրելու քաղաքական և սոցիալական սպառնալիքները:
- Պաշտպանել խոսքի ազատությունը և ապահովել քաղաքացիական ազատությունները՝ ցանկացած խախտում մշտադիտարկելու և վերացնելու մեխանիզմներով:
- Սահմանել մարդու իրավունքների խախտումների դեմ խիստ միջոցներ, հնարավորության դեպքում՝ միջազգային վերահսկողությամբ կամ աջակցությամբ:
- Զարգացնել մեդիա գրագիտությունը հակամարտությունից տուժած հասարակություններում, որը չափազանց կարևոր է լրատվամիջոցների մանիպուլյացիաների և ատելության խոսքի դեմ նրանց դիմակայունությունը բարձրացնելու համար: Այս բարելավումը հնարավորություն կտա անհատներին քննադատաբար գնահատել և հասկանալ մեդիա բովանդակությունը՝ խթանելով տեղեկատվության սպառման ավելի տեղեկացված և խորաթափանց մոտեցումը: Նման նախաձեռնությունը նպատակ ունի մեղմել ապակողմնորոշիչ խոսույթների ազդեցությունը և նվազեցնել թշնամանքի ու ապատեղեկատվության տարածումը:

Հատուկ դրույթներ ինքնության կատեգորիայի համար

- Պաշտպանել մշակութային բազմազանությունը և ժառանգությունը՝ փոքրամասնությունների իրավունքների և պատմական վայրերի պաշտպանության հատուկ դրույթներով:
- Խթանել մշակութային բազմազանությունը և պատմական ճշգրտությունը ներկայացնող կրթական ծրագրերը՝ կենտրոնանալով քննադատական մտածողության հմտությունների զարգացման և ապատեղեկատվության նվազեցման վրա:
- Կիրառել խտրականության, կարծրատիպերի և ինքնությունը ճնշելու դեմ խիստ օրենքներ՝ ապահովելով բոլոր խմբերի համար հավասարություն և անկողմնակալություն:

Այլ դրույթներ

- Ստեղծել համատեղ հանձնաժողով, ինչպես Հայաստանի, այնպես էլ Ադրբեջանի ներկայացուցիչների մասնակցությամբ՝ ներգրավելով միջազգային դիտորդների, որոնք կվերահսկեն պայմանագրի կատարումը:
- Ակտիվորեն ներգրավել սահմանամերձ համայնքներին սահմանազատման և սահմանագծման գործընթացներում, ինչը կարևոր է այդ տարածքների հատուկ կարիքներին համապատասխան որոշումների կայացման ապահովման համար: Այս մոտեցումը ընդգծում է տարածքային բանակցություններում տեղական

պատկերացումների և պահանջների ներառման կարևորությունը՝ դրանով իսկ խթանելով այնպիսի որոշումների կայացումը, որոնք իսկապես արտացոլում և հասցեագրում են այս սահմանների անմիջական ազդեցության տակ գտնվող համայնքների առանձնահատուկ մարտահրավերները և առաջնահերթությունները:

- Ապահովել պայմանագրի կատարումից առաջացած վեճերի կարգավորման հստակ գործընթաց:
- Կազմակերպել կանոնավոր հանդիպումներ՝ վերահսկելու առաջընթացը, կարգավորելու ի հայտ եկած բոլոր խնդիրները և կատարելու պայմանագրի դրույթներում անհրաժեշտ ճշգրտումներ:
- Ներգրավել տեղական համայնքներին, հատկապես՝ սահմանամերձ շրջանների մշտադիտարկման գործընթացներում՝ ապահովելու պայմանագրի անդրադարձն ու հասցեագրումը այն մարդկանց կարիքներին, որոնց վրա այն ներգործում է:
- Անհրաժեշտության դեպքում դրույթները փոփոխության ենթարկել՝ հաշվի առնելով հակամարտության հեղհեղուկ բնույթը և հանգամանքների վերափոխման հավանականությունը:
- Սահմանել պայմանագրի ֆիքսված ժամկետ՝ փոխադարձ համաձայնության հիման վրա երկարաձգման կամ վերանայման հնարավորությամբ:

Ուսումնասիրության արդյունքների վրա հիմնված այս հայեցակարգային միջոցառումները նպատակաուղղված են կայուն խաղաղության համար հիմք ստեղծելուն, որը կկարգավորի երկու ազգերի վրա ազդեցություն ունեցող խորը արմատացած խնդիրները: Այն արտահայտում է հայ-ադրբեջանական հակամարտության բարդությունները և ձգտում է կայուն հիմք ստեղծել խաղաղության և զարգացման համար՝ հաշվի առնելով տուժած բնակչությունների բազմազան կարիքներն ու մտահոգությունները: Պայմանագրի այսօրինակ կառուցվածքը, որը պարունակում է յուրաքանչյուր առանցքային ոլորտին նվիրված հատուկ հոդվածներ, հնարավորություն կտա ստեղծել համապարփակ և գործող փաստաթուղթ, որը զգայուն կլինի տուժած բնակչությունների կարիքների և ձգտումների նկատմամբ: Պայմանագիրը պետք է լինի կենդանի փաստաթուղթ, որը կվերամշակվի փոփոխվող հանգամանքներին համահունչ և ունակ կլինի ապահովել կայուն և ամուր խաղաղություն:

Եզրակացություն և առաջարկություններ. հետագա ուսումնասիրություն և նկատառումներ

Հիմնվելով հայ-ադրբեջանական հակամարտության հետևանքով տուժածների կարիքների և մտահոգությունների մանրակրկիտ ուսումնասիրության վրա՝ հորդորում ենք դիտարկել հետևյալ առաջարկությունները՝ ամրապնդելու խաղաղության պայմանագիրը և հող նախապատրաստելու դրա մարդակենտրոն մշակման և իրականացման համար: Այս առաջարկությունները ևս մշակված են ըստ անվտանգության, բարեկեցության, ազատության և ինքնության չորս հիմնական ոլորտների.

- **Սահմանել ինքնիշխանության, տարածքային ամբողջականության և փոխադարձ հարգանքի սկզբունքները, որոնք գլխավորում են պայմանագիրը.** Այս սկզբունքները պետք է գործեն որպես բարի կամքի երաշխավոր՝ իսպառ բացառելով ցանկացած նոր տարածքային պահանջ և արգելելով ուժային գործողությունների կիրառումը կամ սպառնալիքը:
- **Ստեղծել Խաղաղության պահպանման և մոնիտորինգի համատեղ հանձնաժողով.** Այս հանձնաժողովը կընդգրկի ներկայացուցիչներ ինչպես Հայաստանից, այնպես էլ Ադրբեջանից՝ չեզոք միջազգային մարմինների (երաշխավորների) հնարավոր մասնակցությամբ՝ վերահսկելու հրադադարի համաձայնագրերի կիրարկումը և կանխելու էսկալացիաները: Նման հանձնաժողովի աշխատանքներում կարող են ներգրավվել նաև սահմանամերձ համայնքները:
- **Ներդրումներ կատարել սահմանների անվտանգության մեջ և դրան ուղղված նախաձեռնություններում.** Հատկացնել ռեսուրսներ հակամարտությունից տուժած տարածքներում սահմանային անվտանգության բարելավման համար՝ ապահովելու տեղական բնակչության անվտանգությունը:
- **Իրականացնել հակամարտությունների նկատմամբ զգայուն տնտեսական զարգացման ծրագրեր.** Մշակել միջսահմանային տնտեսական նախաձեռնություններ՝ խթանելով տնտեսական կայունությունը և նվազեցնելով ռեսուրսների մրցակցության պատճառով հակամարտությունների առաջացման հավանականությունը:
- **Միջսահմանային մարդասիրական օգնության ծրագրեր.** Միջազգային աջակցությամբ մշակել հայ-ադրբեջանական մարդասիրական օգնության համատեղ ծրագրեր՝ աջակցելու հակամարտության գոտիների բնակչություններին՝ կենտրոնանալով առաջին անհրաժեշտության ապահովման վրա, ինչպիսիք են սնունդը, ջուրը և բժշկական պարագաները:
- **Ներդրումներ կատարել ենթակառուցվածքներում և հիմնական ծառայություններում.** Վերակառուցել և բարելավել ենթակառուցվածքները տուժած տարածքներում՝ ապահովելով հասանելիություն հիմնական ծառայություններին, ինչպիսիք են առողջապահությունը, էլեկտրաէներգիան և ջրամատակարարումը:
- **Զբաղվածության և տնտեսական զարգացման նախաձեռնություններ.** Ստեղծել աշխատատեղերի հնարավորություններ և տնտեսական զարգացման ծրագրեր, հատկապես՝ սահմանամերձ շրջաններում՝ ֆինանսական կայունությունը բարձրացնելու և տնտեսական դժվարությունների պատճառով գաղթը նվազեցնելու նպատակով:
- **Համատեղ մեդիա նախաձեռնություններ.** Մշակել երկազգային մեդիա նախագծեր՝ ուղղված ապատեղեկատվության ճանաչմանը և նվազեցմանը,

դրանով իսկ խթանելով խոսքի ազատությունը և նվազեցնելով քարոզչությունից ու ատելության խոսքից հրահրված հակամարտությունների հավանականությունը:

- **Քաղաքացիական կրթությանն ուղղված ծրագրեր.** Իրականացնել կրթական ծրագրեր, որոնք ընդգծում են ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների և քաղաքացիական ազատությունների կարևորությունը՝ խթանելով ազատության և բազմակարծության նկատմամբ հարգանքի մշակույթը:
- **Թափանցիկ կառավարման մեխանիզմներ.** Հակամարտության շրջաններում ստեղծել թափանցիկ, հաշվետու կառավարման գործընթացներ՝ վերահսկողության մեխանիզմներով, որոնք կապահովեն տեղական բնակչության մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներին:
- **Մշակութային փոխանակման և պահպանման ծրագրեր.** Խթանել մշակութային փոխանակման և մշակութային ժառանգության պահպանման ծրագրերը՝ ընդգծելով տարածաշրջանի տարբեր մշակութային ինքնությունները հարգելու և պահպանելու կարևորությունը:
- **Խտրականության դեմ օրենքների մշակումը և կիրարկումը.** Մշակել և խստորեն կիրառել խտրականության դեմ օրենքներ՝ ապահովելով հավասարություն և ներառականություն բոլոր էթնիկական խմբերի, կրոնների և սեռերի համար:
- **Կրթության բարեփոխումներ՝ միտված ներառականությանը և բազմազանությանը.** Բարեփոխել կրթական ծրագրերը՝ ներառելով բովանդակություն, որն արտացոլում է տարածաշրջանի տարբեր մշակութային և պատմական խոսույթները՝ խթանելով փոխադարձ հարգանքն ու փոխըմբռնումը:

Այս առաջարկները, որոնք հիմնված են բնակչության հատուկ կարիքների վրա, նպատակ ունեն հասցեագրելու հակամարտության բուն պատճառները և ճանապարհ հարթելու Հայաստանի և Ադրբեջանի միջև կայուն և խաղաղ գոյակցության համար: Չափազանց կարևոր է, որ այս նախաձեռնություններն իրականացվեն համագործակցության ու փոխադարձ հարգանքի ոգով և տարածաշրջանում խաղաղության ու կայունության նկատմամբ երկարաժամկետ հանձնառությամբ:

Հայաստանի և Ադրբեջանի միջև տևական խաղաղության հասնելը բարդ և բազմակողմանի նախաձեռնություն է: Այն պահանջում է նվիրված ջանքեր ոչ միայն դիվանագիտական բանակցություններ անցկացնելու, այլև տուժած բնակչությունների հիմնական կարիքներն ու վախերը հասցեագրելու համար: Այս բացահայտումների ընդգրկումը քաղաքականության մշակման, դիվանագիտական ջանքերի և միջսահմանային նախաձեռնությունների մեջ կարող է ճանապարհ հարթել այս երկարամյա հակամարտության կայուն կարգավորման համար: Մարդակենտրոն ու կարիքահեն մոտեցման նկատմամբ հավատարմությունը մնում է հիմնարար, քանի որ այն ապահովում է, որ ցանկացած խաղաղության պայմանագիր կամ համաձայնագիր ոչ միայն ստորագրվի, այլև հաջողությամբ երկարաժամկետ խաղաղություն և կայունություն հաստատի տարածաշրջանում:

Հակամարտության կարգավորումը և դիվանագիտությունը

Տեղական ձայների ամրապնդում. Խաղաղությանն ուղղված ապագա նախաձեռնությունները պետք է շարունակեն ինտեգրել հակամարտությունից անմիջականորեն տուժածների, հատկապես՝ սահմանամերձ և ոչ սահմանամերձ համայնքների ներկայացուցիչների տեսակետները: Այս մոտեցումը երաշխավորում է, որ խաղաղության պայմանագիրը ոչ միայն դիվանագիտական համաձայնագիր կլինի, այլև կարտահայտի ժողովրդի կարիքները և մտահոգությունները:

Ճկուն դիվանագիտական շրջանակ. Խաղաղության գործընթացը պետք է հարմարեցվի դինամիկ աշխարհաքաղաքական լանդշաֆտին և երկու ազգերի

փոխակերպվող կարիքներին: Դիվանագիտական ջանքերը պետք է կենտրոնանան փոխըմբռնման և հակամարտության հիմնական խնդիրների կարգավորման վրա, ներառյալ՝ տարածքային վեճերը և անվտանգության հետ կապված խնդիրները:

Միջազգային միջնորդություն և աջակցություն. Միջազգային կառույցների շարունակական ներգրավվածությունը, ինչպիսիք են Եվրամիությունը և ԵԱՀԿ Մինսկի խումբը, առանցքային նշանակություն ունի: Նրանց դերը միջնորդության և երկխոսության համար չեզոք հարթակի ապահովման գործում կարող է օգնել հաղթահարելու այն փակուղիները, որոնք հաճախ հանդիպում են ուղիղ բանակցություններում:

Ներքին նախաձեռնություններ

Ներքին համախմբվածության ձևավորում. Ներքին հասարակական համերաշխության ամրապնդումը և՛ Հայաստանում, և՛ Ադրբեջանում կենսական նշանակություն ունի: Սա ներառում է ներքաղաքական և սոցիալական սպառնալիքների հասցեագրումը, ազգային միասնության ամրապնդումը, ինչպես նաև ներքին քաղաքականության համապատասխանեցումը խաղաղության կառուցման նպատակներին:

Կրթական բարեփոխումներ և պատմական խոսույթ. Հետագա ուսումնասիրությունը պետք է ուշադրության կենտրոնում պահի խաղաղաշինության գործում կրթության դերը: Հավասարակշռված պատմական խոսույթը խթանող ուսումնական նյութերի մշակումը և քննադատական մտածողությունը խրախուսող կրթական նյութերը կարող են զգալիորեն նպաստել երկարաժամկետ խաղաղությանը:

Ենթակառուցվածքներ և տնտեսական զարգացում. Ուսումնասիրության արդյունքում բացահայտված տնտեսական և բարեկեցության կարիքների հասցեագրումը չափազանց կարևոր է: Սա ներառում է վնասված ենթակառուցվածքների վերակառուցում, համապատասխան կենսամակարդակի ապահովում և աշխատանքի կայուն հնարավորությունների ստեղծում, հատկապես՝ տուժած շրջաններում:

Միջսահմանային նախաձեռնություններ

Ընդլայնված միջսահմանային համագործակցություն. Նախաձեռնությունների խթանումը, որոնք նպաստում են համագործակցությունը այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առևտուրը, շրջակա միջավայրը և մշակութային փոխանակումները, կարող են վստահություն ձևավորել և նվազեցնել երկու ազգերի միջև թշնամանքը:

Անվտանգության համատեղ մեխանիզմներ. Սահմանի երկայնքով համատեղ անվտանգության միջոցառումների ստեղծումը, հնարավորության դեպքում՝ միջազգային հսկողության ներքո, կարող է օգնել կանխել ապագա էսկալացիաները և ձևավորել վստահություն:

Մարդու իրավունքների և քաղաքացիական ազատությունների հասցեագրումը. Երկու ազգերն էլ պետք է աշխատեն մարդու իրավունքների և քաղաքացիական ազատությունների պաշտպանության ուղղությամբ: Ցանկացած խախտում հետաքննելու և վերացնելու համար համատեղ հանձնաժողովների ստեղծումը կարող է էական քայլ լինել հաշտեցման ճանապարհին:

Ուսումնասիրության հետագա ուղղություններ

Հետազոտության շրջանակի ընդլայնում. Հետագա ուսումնասիրությունը պետք է ներառի Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց տեսակետները և նմանատիպ ուսումնասիրությունների իրականացումն Ադրբեջանում: Սա թույլ կտա ավելի համապարփակ պատկերացում ունենալ բոլոր տուժած բնակչությունների վրա հակամարտության ունեցած ազդեցության մասին:

Երկարաժամկետ ազդեցության վերաբերյալ ուսումնասիրություններ. Հակամարտության երկարաժամկետ հոգեբանական և սոցիալական ազդեցությունների ուսումնասիրությանն ուղղված հետազոտությունը կարող է պատկերացում տալ հոգեկան առողջության աջակցության և սոցիալական հաշտեցման ծրագրերի իրականացման անհրաժեշտության մասին:

Հղումներ

[i] Եվրոպական խորհրդարան, լիագումար նիստ – հոկտեմբեր 2022; Հարցուպատասխան. Հայաստանի և Ադրբեջանի միջև լարվածության սրում. https://www.europarl.europa.eu/RegData/etudes/ATAG/2022/733675/EPRS_ATA(2022)733675_EN.pdf

[ii] Նոր Արևելյան Եվրոպա. Ի՞նչ է կանգնած Հայաստանի և Ադրբեջանի միջև բախումների նոր փուլի հետևում. https://neweasterneurope.eu/2022/09/20/armenia-azerbaijan-pelosi-russia-ukraine/

[iii] CivilNet.am. Իրականում ովքե՞ր են Ղարաբաղը շրջափակող Ադրբեջանի «բնապահպան ակտիվիստները». https://www.civilnet.am/en/news/686152/who-really-are-azerbaijans-environmental-activists-blockading-karabakh/

[iv] Գործիքին ծանոթանալու համար խնդրում ենք անցնել հետևյալ հղումով. https://inclus.com/en/

[v] Թրանսենդ ինթերնեշնալ. Խաղաղության զարգացման միջավայրի ցանց. «Հիմնական կարիքների մոտեցումը» Յոհան Գալթունգ, էջ 12: https://www.transcend.org/galtung/papers/The%20Basic%20Needs%20Approach.pdf

[vi] Առցանց դասընթաց «Վերափոխելով քաղաքացիական հակամարտությունները», Գրենոբլ, 2011թ. դիրքորոշումներ, շահեր և կարիքներ: Աղբյուր. https://www.irenees.net/bdf_fiche-experience-770_en.html

[vii] CivilNet.am. «Անվտանգությունն ընդդեմ ժողովրդավարության. սխալ ընտրություն Հայաստանի համար». Աննա Օհանյան. https://www.civilnet.am/en/news/384712/security-vs-democracy-a-false-choice-for-armenia-anna-ohanyan/

«Խաղաղության երկխոսություն» ՀԿ

Հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, 2002,
ք. Վանաձոր;
Մյասնիկյան 12, բն. 40, «ԽԵ» գրասենյակ;
Հեռ.՝ +374 (322) 21340;
Բջջ.՝ +374 (55) 820 632; (93) 820 632
Էլ. փոստ՝ ekhachatryan@peacedialogue.am;
mailbox@peacedialogue.am
URL: https://www.peacedialogue.am

Ուսումնասիրությունն իրականացվել է «Հաշտեցման Ռեսուրսներ» հկ-ի և «Ճգնաժամերի կառավարման նախաձեռնության» հետ սերտ համագործակցությամբ՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Վանաձոր, Հայաստան 2023 – 2024թթ.